

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԲՈԶՈՅԱՆ ԱԶԱՏ ԱՐՏԱՇԻԿ

սխոյժ և երախտաշարժող անհոգ.

Գ. Դ. Ասրգալյանի

ՀԱՅ-ԲՅՈՒԶԱՆԴԱԿԱՆ ԵԿԵՂԵՅԱԿԱՆ
ԲԱՆԱԿՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԱՎԵՐԱԳՐԵՐԸ
(1165 - 1178 թթ.)

Է.00.05

Պատմագրություն, աղբյուրագիտություն մասնագիտությամբ

Պատմական գիտությունների դոկտորի գիտական
սատիճանի հայցման առեւնախոսության
սեղմագիր

ԵՐԵՎԱՆ - 1995

Աշխատանքը պատրաստվել է ՀՀ ԳԱԱ Արևելագիտության
ինստիտուտում

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

ՀՀ ԳԱԱ թղթակից-անդամ, պատմական գիտությունների դոկտոր
ԲԱՐԹԻԿՅԱՆ ՀՐ. Մ.

Պատմական գիտությունների դոկտոր

ՅՈՒՋԱԿՅԱՆ Կ. Ն.

Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

ԿԻՆՅԱՆ Վ. Ա.

Առաջատար կազմակերպություն՝ Խ.Արքայանի անվան Հայկական
պետական մանկավարժական ինստիտուտի Ընդհանուր պատմության
ամբիոն

Պաշտպանությունը կաշնարտ է 1995 թ. հոկտեմբերի 12 ին ժամը
— ին ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի գիտական առիճաններ
շնորհող պատմության բնագավառի 006 մասնագիտական խորհրդի նիս-
տում (հասցեն՝ Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24գ)

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Արևելագիտության ինս-
տիտուտի գրադարանում

Սեղմագիրը առաքված է 1995 թ. _____ -ին

Մասնագիտական խորհրդի գիտնական քարտուղար, պատմական
գիտությունների թեկնածու

(Քոսյան Արամ)



Աշխատության ընդհանուր բնութագիրը. Գիտերաբանական աշխատան-
քում ուսումնասիրվում են ԺԲ դարի 60 - 70-ական թթ. հայ-բյուզանդական
բանակցությունների վավերագրերը, որոնք նկարագրվում են, թվագրվում և
ենթարկվում մանրակրկիտ վավերագրագիտական և պատմաբանասիրա-
կան քննության: Այստեղ սկզբնաղբյուրների թույլ տված հնարավորություն-
ների սահմաններում հետազոտության են ենթարկվում կոստանդնուպոլսի
կալսերական, պատրիարքական ու Հոռմկլայի Հայոց կաթողիկոսարանի նո-
տարատների գործունեությունը և աշխատանքի սկզբունքները: Բնարկվում
են նաև մեզ հասած վավերագրերի հետադա նակատագրի հետ կապված
խնդիրներ, շրջանառության մեջ են դրվում և Մերձավոր Արևելքի պատմու-
թյան շրջանակներում հետազոտվում են նաև մի շարք նորահայտ վավերա-
գրեր, որոնք թեև ժամանակագրորեն պատկանում են տարբեր դարաշրջան-
ների, ուսկայն գաղափարական առումով բխում են նույն սկզբնաղբյուրից և
ներկայացնում են Հայոց եկեղեցու ծիսագավառական ըմբռնումների հանրա-
գումարը:

Մենագրության մեջ բնութագրվում են ԺԲ դարի հայ-բյուզանդական
եկեղեցական փոխհարաբերությունների վավերագրերի ժողովածուները,
նշտվում է բանակցություններին մասնակցած եկեղեցական և աշխարհիկ
գործիչների ինքնությունը, փորձ է կատարվում գտնել նրանց դիրքորոշման
հասարակական, քաղաքական ու հոգեդո-եկեղեցական դրդապատճառ-
ները:

Հայ-բյուզանդական բանակցությունները բնարկվում են Մերձավոր
Արևելքի և Բալկանների այդ ժամանակաշրջանի քաղաքական պատմութ-
յան լայն էտնախորքի վրա: Վավերագրերի և պատմական մյուս սկզբնաղբ-
յուրների բնձնում նյութի վրա ցույց են տրվում եկեղեցական փոխհարաբե-
րությունների քաղաքական շարժառիթները այնպիսի մի ժամանակաշրջա-
նում, երբ Կիլիկիայում ձեռադրվում էին Հայոց անկախ պետականության
սաղմերը:

Մեթոդական հիմքը. Հայագիտությունը տակավին չի մշակել վավե-
րագրերի ուսումնասիրության և նկարագրության մեթոդ: Հեղինակը, յուրաց-
նելով եվրոպական վավերագիտության հետազոտման սկզբունքները, ձևա-
վորել է հայկական փաստաթղթերի քննության սեփական մոտեցումները և,
հենվելով իր տրամադրության տակ եղած նյութի վրա, մշակել է հայկական
վավերագրի նկարագրության և ուսումնասիրության մոդել, որը կիրարկելի է
Հայոց կաթողիկոսական համակի վավերագրագիտական հետազոտության
բնագավառում: Այդ մեթոդի օգտագործման շնորհիվ հն առավոր է դառնում
պարզաբանել Հոռմկլայի կաթողիկոսական, Բյուզանդական կալսերական և
պատրիարքական նոտարատների աշխատանքի հիմնական սկզբունքները,
թույլ է տալիս պատմական հետազոտության շրջանակներում բնարկել այս
կամ այն փաստաթղթի վավերականության հետ կապված խնդիրներ:

Սույն աշխատանքի տրամաբանական կառույցը հանգեցնում է նրան, որ թղթերի ժանրի զարգացումը պետք է սյարքերացնել նրանց բերած նյութով, ինչպես նաև թղթատարներում և թղթավարտներում դարերի ընթացքում կատարվող բանաձևային համակարգերի օրինաչափ փոփոխություններով: Գրանդի իսկ մեծ կարևորություն է ստանում թղթերի տեսական բաժանումը վավերագրերի և համապատասխանաբար՝ գրական երկերի: Խննդի ճշգրտության գրական գործունեության այս երկու սեռերն էլ անբաժանելի մասն են հայագիտական ժառանգության, այնուամենայնիվ՝ թղթերի վավերագրագիտական ուսումնասիրությունն առաջին հերթին խնդիր է դնում, որպես օժանդակ գիտություն, ծառայել պատմության և պատմագրության կարիքներին:

Նոթումքը. - Հայագիտության զարգացման ժամանակակից փուլում առաջնակերպ նշանակություն ունեն թուղթ- ուղեթղթերի գիտական բնագրերի կազմումն ու վավերագրերի մանրակրկիտ ձեւաբանական և պատմաաղբյուրագիտական հետազոտությունը: Աշխատության մեջ, ինչպես ասվեց, փորձել ենք հազագիտության կարիքների համար մշակել Հայոց միջնադարյան վավերագրի հետազոտության և նկարագրման համապատասխան մոտեցումներ և սկզբունքներ:

Երեկա ուսումնասիրության մեջ առաջին անգամ ներկայացվում են միջնադարյան հայկական և բյուզանդական նոտարատներում ստեղծված կամ պահպանված վավերագրերի տեսակներից մի քանիսը՝ կաթողիկոսական, կայսերական և պատրիարքական թղթերը: Ավելի միշտ՝ 1165-1178 թթ. հայ-բյուզանդական միութենական բանակցությունների ընթացքում Հայոց կաթողիկոսների փոխանակած (բյուզանդական կայսր Մանուիլ Ա, Կոստանուս II և պատրիարք Միքայել Գ. Ամբիասիսին առաջված և Հռոմկայում նրանցից ստացված) վավերագրերը: Մեր նպատակն է այդ փաստաթղթերի կառուցվածքային ուսումնասիրության արդյունքները ծառայեցնել ԺԲ դարի երկրորդ կեսի միջազգային փոխհարաբերությունների ոլորտում Հայոց կաթողիկոսարանի տեղը, դերն ու կշիռը որոշելու խնդրին: Նշված ժամանակաշրջանում հայերեն և հունարեն լեզուներով գրված ու պահպանված վավերագրագիտական նյութի առատությունն ու ծավալագրիակությունը թույլ է տալիս ընդհանուր պատկերացում կազմել Հռոմկայի կաթողիկոսական դիվանի, Կոստանդնուպոլսի պատրիարքական և կայսերական նոտարական գրասենյակներում վավերագրեր գրելու ավանդների և փաստաթղթի կազմման, մշակման և պահպանման սկզբունքների մասին:

Ուսումնասիրության նպատակն ու խնդիրները. - Ռուբիկյան իշխանական տունը Թորոս Ա-ի ղեկավարությամբ ԺԲ դարի երկրորդ կեսին շարունակում էր կրիկիայում գլխավորել հակաբյուզանդական քաղաքական թևը, որի ծրագրերը և փառքայած հույները համահունչ էին ժամանակի պատմական կացությանը: ԺԲ դարի 60-70-ական թվականներին Բյուզանդական

կայսրության նվաճողական միտումները կրիկիայում աներկրա էին, ուստի չէին դադարում բյուզանդական զորահրամանատարների հետ դաշնակցած հունամետ կողմի և Ռուբիկյան իշխանության միջև բոլորովորդ ուղղակի բախումները: Նման ընդհարումները թույլ չտալու միտումով էր, որ 1165 թ. կրիկիայի զորահրամանատար նշանակված Ալեքս Աքսուխը և Գրիգոր Գ. կաթողիկոսի եղբայր Ներսես Շեորհալին բանակցություններ են սկսում եկեղեցական միության խնդրի շուրջ: Այսպես երկխոսությունը շարունակվեց մինչև 1178 թ.: Այդ ընթացքում Բյուզանդական կայսրությունը փորձում էր Հայոց կաթողիկոսարանին պարտադրել եկեղեցական միության մի այնպիսի ծրագիր, որը կաթողիկոսական աթոռը կախման մեջ կդնէր Կոստանդնուպոլսի պատրիարքությունից:

Ուշագրավ է, որ 1165-1178 թթ. հայ-բյուզանդական եկեղեցական միությանը վերաբերող վավերագրերում բյուզանդական կայսրը և Կոստանդնուպոլսի պատրիարքը հայերի հետ վարվող բանակցությունները և եկեղեցական միության խնդիրը երբեք չեն փորձում կապել Հռոմի պապության հետ: Կայսրության վարած դիվանագիտական փոխհարաբերությունների հետ: Սակայն, հակառակ միտում է նկատվում Ներսես Շեորհալու թղթերում. Հռոմի և Կոստանդնուպոլսի եկեղեցական հարաբերությունների նկատմամբ կաթողիկոսի շահագրգռությունն ակնհայտ է:

ԺԲ դարի երկրորդ կեսին արդեն Հայոց եկեղեցական կազմակերպության ներսում ձևավորվել էր երկու իրարամերձ տեսակետ, որոնց շուրջ շորբորվում էր տարբեր թեմերի միջև ծալք առած կոնստանդնուպոլսի պապարք: Միշտ է՝ երկու տեսակետի կողմնակիցներն էլ Հայոց եկեղեցին և նրա դավանանքը համարում էին ուղղափառ, սակայն կողմերից մեկի համար դա միակ ուղղափառ եկեղեցին էր, մյուսի համար՝ ուղղափառ եկեղեցիներից մեկը, որին հարկավոր էր վերագրվել իր տեղը Տիեզերական եկեղեցու նկիրապետական կառույցում: Առաջինները բացահայտորեն մերժում էին Քաղկեդոնի ժողովն ընդունող բոլոր եկեղեցական կազմակերպությունները, իսկ երկրորդները փորձում էին, պահպանելով սեփական եկեղեցու ինքնությունը և ինքնանկախ նվիրապետական կառույցը, հաշտության եզրեր գտնել հարևան եկեղեցիների և մանավանդ Բյուզանդական եկեղեցու հետ: Առաջինները դեմ էին ծիսադավանական որևէ զիջման, իսկ երկրորդները միություն հաստատելու նպատակով պատրաստ էին կատարել որոշ էական զիջումներ:

ԺԲ դարի 60-ական թվականներից Հայոց եկեղեցական կազմակերպությունը Հռոմկայի կաթողիկոսարանի ղեկավարությամբ ընտրեց սեփական եկեղեցու ինքնությունության պահպանության և հարևան եկեղեցիների հետ հաշտության եզրեր գտնելու ճանապարհը: Նման դիրքորոշումը բխում էր կաթողիկոսարանի եկեղեցաքաղաքական ծրագրերից, այն է՝ կրիկիայում քիչ թե շատ ամուր հայկական պետություն ստեղծելու անհրաժեշտու-

բյուզնդ, որի համար հարկավոր էր նաև երկրամասը բնակեցնող մյուս, հատկապես քրիստոնյա ժողովուրդների աջակցությունը: Գրիգոր Գ. Պան-լավունին, Ներսես Գ. Շնորհալին, Գրիգոր Գ. Տղան և Ներսես Լամբրոնացին ու այդ թվին պատկանող մյուս քարձրաստիճան հայ հոգևորականները չափը չէին խնայում հաշտեցնելու Կիլիկիայում գործող եկեղեցիներ ունեցող ժողովուրդներին հայկական իշխանությունների ու Հայոց եկեղեցու հետ: Այդ նպատակով 1165 թ. Հոռմկլայի Հայոց կաթողիկոսարանը բանակցություններ է սկսում Բյուզանդական արքունիքի և Կոստանդնուպոլսի օրթոդոքս պատ-րիարքարանի հետ:

Ներսես Շնորհալին և նրա հետևորդները կենտրոնացնում են իրենց ուժերը՝ հաշտեցնելու համար միմյանց հարևանությամբ ապրող քրիստոնյա տարբեր եկեղեցիների ներկայացուցիչներին: Ըստ Տարսուհի արքեպիսկոպոս Ներսես Լամբրոնացու, քրիստոնյա երկու եկեղեցիների միջև խմորված հա-կարանքն այնտեղ էր հասել, որ. «Հայն միշտ աղաղակէ. Աստուած իմ, գոհանամ զքեմ, որ չարարէր զիս Հոռում. և Հոռումն զնոյն բանն նրկորդէ, թէ՛ որ ո՛չ արարէր զիս Հայ»: Դավանական հանգուրժողակաւնության բա-ղաբանկանությունը, որը որդեգրել էին Հոռմկլայի կաթողիկոսարանը և Ռու-բինյան իշխանությունը, հետզհետե խոր արժաններ էր նետում Կիլիկիայում և մերձակա հայաբնակ շրջաններում: Սակայն պետք է նկատել, որ Հայոց պաշտոնական եկեղեցու դիրքորոշումը որքան լուրջ էր քաղկեդոնականների (հույների և լատինների) նկատմամբ, նույնքան էլ մերժողական էր երկարժա-կություն ընդունած և Բյուզանդական եկեղեցուն ապավինած հայերի նկատ-մամբ:

Այդ հանգուրժողակաւնության ընդգծված դրսևորումն էր Հայոց եկե-ղեցու պահվածքը Հյուսիսային Ասորիքում և Կիլիկիայում գործող հակոբիկ-ատորական, օրթոդոքս-բյուզանդական և կաթոլիկ-հոռմեական եկեղեցինե-րի նկատմամբ: Հոռմկլայի նոտարական գրասենյակից դուրս եկած վավե-րագրերում տարբեր եկեղեցիների ծիսադավանական տարբերությունները համարելով դարեր շարունակ իրարից անկախ ապրած ժողովուրդների պատմամշակութային ավանդներից արտածված սովորություններ, Հայոց կաթողիկոսարանը, ի տարբերություն հարևան եկեղեցիների, դրանց վերաց-ման հարցը կորուկ չէր դնում և կոչ էր անում մեղմացնել միմյանց նկատ-մամբ դրսևորվող անհամադրվողականությունը: Հայ մատենագրության մեջ այս գաղափարախոսության հետագա շարունակողները դարձան Մխիթար Գեղը և վարդան Այգեկցին, որոնք իրենց աշխատություններում հաշտության կոչ էին անում կողք-կողքի ապրող տարբեր եկեղեցիների ներկայացուցիչ-ներին:

Աշխատության պաշտոնական արժեքավորումը.-Մենագրության մի շարք հատվածներ զեկուցման կամ հողվածի տեսքով հրապարակվել են գի-տական հանդեսներում, ընթերցվել հայագիտական և բյուզանդագիտական

միջազգային (Ներսես Լամբրոնացու և Կոստանդին Հերապոլսեցու բարգ-մանական համագործակցությունը, տե՛ս «Հայ միջնադարյան գրականու-թյան միջազգային գիտաժողով», Երևան, 15-19 սեպտեմբերի 1986, Չեկո-ցովների գրույրներ, Երևան 1988, էջ 30-31, Документы армяно-визан-тийских церковных сношений XII века (императорские послания), в кн.: XVIII Международный конгресс византинистов, Резюме сооб-щений, I, М. 1991, с.166-167, Collections of Documents about Armenian-Byzantine relations, AIEA 10th anniversary con-ference, Provisional Abstracts, London 1993, The Position of the Armenian Church in the Universal Hierarchy: The Sy-nod of Hromkla and the Issue of the Patriarchate of Antioch in 12th century Armeno-Byzantine Ecclesiastical Discussi-ons, International symposium Armenian Kingdom of Cilicia, New York 1993) ու տեղական գիտաժողովներում:

Մույն աշխատանքը բնութայն է առկել ՀՀ ԳԱԱ Արևելագիտու-թյան ինստիտուտի Քրիստոնյա Արևելք բաժնում և նույն ինստիտուտի գիտական խորհրդում: Մենագրության որոշ թեզեր տեղ են գրավել պատ-մության դասագրքերում և մերժողական ձեռնարկներում:

Ավարտանալու շոշափված խնդիրներից շատերը հիմնված են Ներսես Լամբրոնացու կազմած «Պատմառ խնդրոյ միաբանութեան» (պ-ստոնեան՝ ՊԽՄ) ժողովածուի մեր կազմած գիտահամեմատական բնագրի վրա (15 մամուլ), որը ընկալվել է հաճախարակել է տպագրության:

Աշխատանքը բաղկացած է ներածությունից, երեք մասից և գրակա-նության ցանկից: Ցուրաքանչյուր մաս կազմված է առանձին գլուխներից:

Առեմախոսության հիմնական բովանդակությունը.

Ներածության մեջ հիմնավորված է ընկալվող խնդրի գիտական արդիականությունը, տրված է ուսումնասիրվող աշխատության կարևորու-թյունը և մերժողական հիմքը, հիմնական գծերով բերված է հարցի ուսումնա-սիրության պատմագրությունը:

Թսան Ա. «1165-1178 թթ. հայ-բյուզանդական եկեղեցաքաղաքական բանակցությունների վավերագրերը»: Գլուխ առաջին. «Փոխանակված փաստաթղթերի նկարագրություն»։ Այստեղ բերված վավերագրերի նկա-րագրությամբ հայագիտության մեջ առաջին փորձն է կատարված հետա-գոտելու և գիտական դասակարգման ենթարկելու ԺԻ դարում Հոռմկլայի կաթողիկոսական (մասամբ նաև Կոստանդնուպոլսի կայսերական և պատ-րիարքական) նոտարատուն մուտք գործած պաշտոնական վավերագրերը: Վերլուծական նկարագրություն-ցանկը (Regestes) կազմելիս շանացի էնք հնարավորին չափ ամբողջական ներկայացնել յուրաքանչյուր վավերագիր, բացահայտել նրա բնույթն ու էությունը, հնարավորություն տալ հետազո-

տողներին առաջել ամբողջական պատկերացում կազմել դրանց մասին: Մեր ցանկում հիշատակվում են միայն այն փաստաթղթերը, որոնք գրված են 1165-1178 թթ., ունեն պաշտոնական բնույթ և դուրս են եկել Հայոց կաթողիկոսական (N), Բյուզանդական կաթողիկոսական (X), և Կոստանդնուպոլսի պատրիարքական (Y) նոտարատեղիքից և անպայման վերաբերում են հայ-բյուզանդական եկեղեցաքաղաքական ստորկայություններին, այսինքն՝ նշված միջնադարյան նոտարատեղիքի միջև փոխանակված փափերագրեր են: Ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ 1165-1178 թթ. բանակցությունների ընթացքում կայար Մանուել Ա Կոմնենոսի (1143-1180), պատրիարք Միքայել Գ. Անքիալոսի (1170-1178) և Հայոց կաթողիկոսներ Ներսես Գ. Շնորհալու (1165-1175) ու Գրիգոր Գ. Տղայի (1173-1193) նոտարական գրասենյակներում գրվել է մոտ 25 մամակ և փաստաթուղթ: Հիշատակված փափերագրերից մեկ է հասել միայն 20 ամբողջական բնագիր (N^o 2-8, 10-16, 19, 21-25): Մնացած հինգ փափերագրերից հատվածներ կամ դրանց մասին տեղեկություններ են միայն պահպանվել նույն և հաջորդ դարաշրջանների մատենագրական մի շարք երկերում (N^o 1, 9, 17, 18, 20): Ռուսումնասիրության առարկա փափերագրերի հիմնական մասը մեկ է հասել Ներսես Լամբրոնացու կազմած ժողովածոյի կազմում, իսկ երկու փափերագիր պահպանվել է միայն հունարենով, Թեոփիանոս մագիստրոսի «Տրամախոսությունների» բնագրում (N^o 10, 11): Փաստաթղթերի մի նշանակալի մասն էլ մեկ է հասել և՛ հայերեն, և՛ հունարեն պատճեններով (N^o 7, 8, 12, 13, 14): Նկարագրված փափերագրերից միայն մեկն է, որ չի մտել հիշատակված երկու ժողովածուներից որևէ մեկի մեջ, այլ հասել է առանձին, երկու հայերեն ձեռագրի ավանդությամբ (N^o 21):

Հիմք ընդունելով Բյուզանդիայի քաղաքական շահերի դրսևորումները, գիվանագիտական փոխհարաբերությունների այս ժամանակաշրջանը պայմանականորեն բաժանել ենք մի քանի փուլի.

ա) 1165-1166 թթ.՝ հայ-բյուզանդական եկեղեցաքաղաքական փոխհարաբերությունների սկզբնավորման փուլ: Բյուզանդիայի միտումն էր ամրապնդել իր դիրքերը Կիլիկիայում, շահագրգռել հայկական բնակչությանը: Այդ իսկ պատճառով քննվում են դավանածիսական հարցեր, սակայն բյուզանդացիները որևէ պահանջ չէին պարտադրում: Բանակցությունները վարում էին բյուզանդական աշխարհիկ պաշտոնյաները:

բ) 1166-1169 թթ.՝ Բյուզանդիան իր ուշադրությունը սևեռել էր Արևմուտքին, Հայոց եկեղեցու հետ հարաբերությունները ժամանակավորապես դադարեցվում են:

գ) 1169-1175 թթ.՝ Մանուել Ա Կոմնենոսը վերսկսում է բանակցությունները հայերի հետ: Քաղաքական առնանկյունից Մանուելին կրկին հրապարտում է Արևելքը: 1169 թ. երուսաղեմի թագավորի հետ արկածախնդրական արշավանք է ձեռնարկվում դեպի Եգիպտոս, սրվում են փոխհարաբե-

րությունները Զրիդրիխ Բարբարոսայի դաշնակից Իկոնիայի սուլթանության հետ: Բյուզանդիան քայլեր է ձեռնարկում մոտենալու Հռոմի պապական եկեղեցուն: Մանուել կայսրը որոշում է հարձակման անցնել հայոց եկեղեցու դեմ և պարտադրում է ինք ծիսադավանական պահանջ: Բյուզանդական դեսպանագնացությունները ղեկավարում է «Թագավորական ծառա» (ձեռնորհախոս): Բանակցություններին մասնակցում է նաև Փիլիպուպոլսի նախկին վանքերից մեկի սուաչևորդ Հովհաննես Աթմալը:

գ) 1175-1176 թթ.՝ Մանուել Ա Կոմնենոսը արշավում է Արևելք՝ պատերազմելու Իկոնիայի սուլթանության դեմ: Առաջին անգամ այս բանակցությունների պատմության մեջ դեսպանագնացություն է ձեռնարկում Հայոց կաթողիկոսը: Բանագնացն է Հոսեկյայում մեծացած, սակայն Հյուսիսային Ասորիքում գործող Բյուզանդական եկեղեցու պաշտոնյա Կոստանդին հույն բանաբան:

ե) 1176-1178 թթ.՝ Բյուզանդիան ամբողջովին կորցնում է իր դիրքերը Կիլիկիայում և Փոքր Ասիայում: Մանուել Ա Կոմնենոսը 1176 թ. սեպտեմբերին պարտվում է Միքիոկեֆալոսի մոտ: Հայոց եկեղեցու հետ հարաբերություններում կայսրը ստիպված էր հրաժարվել մի քանի տարի առաջ իր կողմից առաջադրված ուր ծիսական պահանջներից և խնդրել, որ կաթողիկոսն ընդունի միայն մեկ՝ դավանական կետ: Արևելքում Բյուզանդիայի արտաքին քաղաքական ձախողումից հետո ակնառու է եկեղեցական բանակցություններում զիջումների դիմելու, իր դիրքերը վերանայելու Մանուել Ա կայսեր միտումը:

Վլադի երկրորդ. «Վափերագրագիտական վերլուծություն» Աշխատության այս հատվածում փորձել ենք վափերագրագիտական քննության հիման վրա վերականգնել փոխհարաբերությունների այն սկզբունքները, որոնք գոյություն ունեին Հայոց եկեղեցու և Բյուզանդական կայսրության միջև, նոտարական գրասենյակների մակարդակում: Նման աշխատանքի արդյունքները թույլ են տալիս ավելի ամբողջական պատկերացում կազմել պահպանված նյութի վերաբերյալ, քննարծակել մեր գիտելիքը Հռոմիկայի Հայոց կաթողիկոսարանի, Կոստանդնուպոլսի կայսերական և պատրիարքական նոտարական գրասենյակների աշխատանքի մեկ անձանոթ ևս մի բնագավառի վերաբերյալ: Այստեղ վափերագրագիտական-ձեռքարկական վերլուծության են ենթարկվում փաստաթղթերի չորս տեսակ. կաթողիկոսական մամակ առ կայսր և առ պատրիարք, կայսերական մամակ առ կաթողիկոս ու պատրիարքական մամակ առ կաթողիկոս:

Ա) Կաթողիկոսական թուղթ առ կայսր: ՊիՄ՝ ժողովածուում պահպանվել է Հայոց կաթողիկոսներ Ներսես Գ. Շնորհալու և Գրիգոր Գ. Տղայի գրչին պատկանող ինք վափերագիր (N^o 2, 4, 5, 6, 8, 15, 19, 21, 24)՝ ուղղված Բյուզանդական կայսրության քաղաքացիական իշխանություններին և Մանուել Ա Կոմնենոս կայսրին: Դրանցից վեցը (N^o 2, 4, 5, 6, 8, 15)

պատկանում է Ներսես Դ Շնորհալույն, երեքը՝ Գրիգոր Դ Տղային (N^o 19, 21, 24): Այդ վավերագրերից մեկը է միայն, որ ունի կայսրին առաքված պաշտոնական նամակի տեսք (տե՛ս N^o 8, 15, 19, 21, 24): Ուրեմն՝ կարելի է ճշտորեն արձանագրել, որ 1165-1178 թթ. հայ-բյուզանդական բանակցությունների առիթով կաթողիկոսական դիվանատնից դուրս եկած վավերագրերից մեկ է հասել կայսր Մանուել Ա Կոմենենոսին առաքված ինը պաշտոնական վավերագրի բնագիր, որոնցից մեկը պահպանվել է ԺԲ դարի ամբողջական հումարեն թարգմանությամբ, մյուսը՝ հատվածաբար: Մեզ չի հասել սկզբնաղբյուրներում վկայված և Մանուել Ա կայսերն առաքված երկու վավերագիր (N^o 9, 17): Պահպանված վավերագրերի քննությունը ցույց է տալիս.

ա) 1165-1178 թթ. Կոստանդնուպոլիս առաքված կաթողիկոսական բոլոր թղթերն էլ գրվել են հայերեն լեզվով: Այդ մասին է վկայում Ներսես Դ Շնորհալու (N^o 8) թղթի հումարեն բնագիրը, որը թարգմանել է Հովհաննես Արմանը՝ Թեոփիանոս մագիստրոսի օգնությամբ (այս վկայությունը պետք է հասկանալ ճշտությամբ, հայերենից հումարեն բառացի թարգմանել է Հովհաննես Արմանը, իսկ հումարենի շարահյուսական կողմը, այսինքն խմբագրությունն ապահովել է Թեոփիանոս մագիստրոսը): Ամենայն հավանականությամբ՝ թարգմանության օրինակը հայերեն ինքնագրի հետ միասին որոշ ժամանակ պահպանվել է Կ. Պոլսի կալսերական նոտարատանը:

բ) Թղթառաջբներում և վերջարան-հրաժեշտի բանաձևերում նկատված տարբերությունները խոսում են այն մասին, որ Հռոմկլայի կաթողիկոսական դիվանատանը դեռևս չեն կարողացել մշակել կայսերն առաքվող թղթի միօրինակ բանաձև: Քիչ թե շատ կայուն բանաձև կարելի է համարել Գրիգոր Դ Տղայի նամակների թղթառաջբներն ու վերջարան-հրաժեշտները:

գ) Կայսերն ուղղված կաթողիկոսական նամակի թղթառաջբի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Ամենայն Հայոց հայրապետը միջազգային եկեղեցաքաղաքական բանակցություններում իր ժառանգած արժույթ ստորադասում է Բյուզանդական կայսեր հեղինակությանը, միշտ օգտագործելով «X << N» բանաձևը: Այսինքն՝ բանաձևի սկզբում տրվում է կայսեր անունն ու արտոգուշարը, որին հաջորդում են կաթողիկոսի անունն ու պատվանունները:

դ) Հռոմկլայից Կոստանդնուպոլիս ուղարկվող կաթողիկոսական թուղթը որպես կանոն չի թվագրվում: Բացառություն է կազմում Ներսես Դ Շնորհալու N^o 8 թուղթը, որը հայերեն բնագրում թվագրված է «գրեցա ի թուականութեանս Հայոց վեց հարիւր ինն և տասն, յամենանն Հայոց Արեգ եւ Հոռոմոց՝ հոկտեմբեր»: Այստեղ հավանաբար դրված է այն թվականը, որով վավերագիրը մուտք է գործել Հռոմկլայի կաթողիկոսական դիվանատուն: Երե մեկ հասած հայերեն բնագրում փաստաթուղթը թվագրված է

վերջարան-հրաժեշտից հետո, ապա նույն թղթի հումարեն թարգմանությունը թվագրումը պահպանել է վերնագրի մեջ. «շորրորդ ինդիքտիոնի դեկտեմբեր ամիս»: Թվագրումների տարբերությունը մեզ թույլ է տալիս հշտել, թե ինչ ժամանակամիջոցում է նամակը հասել Հռոմկլայից Կոստանդնուպոլիս:

Ե) Կալսերական թուղթ առ կաթողիկոս: Նկատի ունենալով կաթողիկոսի՝ առ կայսր թղթերի վերևում նկատված յուրահատկությունները, անդրադառնալով կալսերական նամակներին: Ներսես Համբրոնացու կազմած ժողովածուում պահպանվել է 4 փաստաթուղթ (N^o 3, 7, 12, 22), որոնք դուրս են եկել Մանուել Ա Կոմենենոս կայսեր իշխանության շրջանի նոտարական գրասենյակից և ուղղված են Ներսես Դ Շնորհալու ու Գրիգոր Դ Տղա կաթողիկոսներին: Չորս վավերագիր էլ իր «Տրամախոսութիւնների» բնագրում բերում է Թեոփիանոս մագիստրոսը (N^o 7, 10, 11, 12), որոնցից մեկը (N^o 10), ինչպես վկայում է խորագիրը, գրվել է Միքայել Գ Անքիալոսի կողմից, Մանուել Ա Կոմենենոսի անունից և ներկայացված չէ Ներսես Համբրոնացու կազմած ժողովածուում: Հայերեն թարգմանությամբ մեզ չի հասել նաև Մանուել Ա Կոմենենոսի այսպես կոչված «գաղտնի» թուղթը (N^o 11): Թղթերից երկուսի բնագրերը, որոնց մասին պահպանվել են միայն սկզբնաղբյուրների վկայություններ, մեզ չեն հասել ո՛չ հայերեն, ո՛չ էլ հումարեն բնագրի նկարագրով (N^o 18, 20): Այդ վավերագրերի թղթառաջբի բանաձևն է X >> N: Այսինքն՝ սկզբում տրվում է կայսեր արտոգուշարը, ապա՝ կաթողիկոսինը: Ներսես Դ Շնորհալուն ուղղված երկու վավերագիր, որոնց բնագրերն առկա են Թեոփիանոսի «Տրամախոսութիւններում», պահպանվել են նաև Ներսես Համբրոնացու կազմած «Գեւ»՝ ժողովածուում, սակայն դրանց թարգմանությունը բաղական հեռանում է պահպանված հումարեն բնագրերի իմաստներից: Այս վավերագրերի հայերեն թարգմանությունների կաթողիկոսական նոտարատանը օգտագործված հնարանքները կարող են բանասիրական առումներն ուսումնասիրության մյուս դառնալ: Թարգմանիչները փորձում էին մեղմացնել կամ վերաշարադրել կալսերական նամակների այն հատվածները, որ դուրս չէին կասկած եր արտահայտվում Հայոց եկեղեցու ուղղափառ դավանանքի վերաբերմամբ, և քնդգծված կերպով այն գաղափարն են անցկացնում, որ անհրաժեշտություն է միության հաստատումը Բրիտանիայի բաժանված եկեղեցիների միջև:

Այսպիսով՝ 1165-1178 թթ. հայ-բյուզանդական եկեղեցական բանակցությունների ընթացքում գրված կալսերական նամակների հայերեն և հումարեն բնագրերի պահպանված բանաձևերի համեմատությունից պարզ երևում է, որ մեզ հասած նյութի շնորհիվ հնարավոր է վերականգնել բնագրերի կայուն բանաձևումները, որոնց մի մասը տարբեր պատճառներով չի պահանդվել: Այս տեսանկյունից անգնահատելի նյութ կարող են տալ Թեոփիանոս մագիստրոսի «Διόκλητος»-ների հումարեն հնագույն ձեռագրերը:

Քննարկված նյութի հիման վրա կարելի է կատարել որոշ նախնական դիտարկումներ:

ա) Թղթառաջների կայսերական տիտղոսներին նվիրված հատվածների հայերեն թարգմանությունների որոշ անհամապատասխանությունները հունարեն բնագրերի հետ կարելի է բացատրել հրանով, որ Հռոմկլայի նոտարատանը շարունակվում էր փնտրությունը՝ գտնելու համար կայսեր տիտղոսաշարը հավուր պառնասի ներկայացնելու համապատասխան ձևակերպումներ:

բ) Ավելի էական տարբերություններ ունեն այս նամակների թղթառաջների կաթողիկոսներին վերաբերող հատվածների հունարեն և հայերեն ձևակերպումները: Հայկական տարբերակները ընդգծում են Հայոց հայրապետի իշխանության աստվածային բնույթը և անպայման հիշատակում են կաթողիկոսի անունը, որին հասցեագրված է թուղթը:

գ) Վավերագրերի թվագրության տարբերություններից երևում է, որ նամակների հայերեն թարգմանված պատճենները երկրորդ անգամ թվագրվել են Հռոմկլայի կաթողիկոսական նոտարական գրասենյակում և կրում են կամ վավերագրի թարգմանության, կամ էլ փաստաթղթի նոտարատուն մոտը գործելու թվականը:

Գ) Կաթողիկոսական թուղթ առ պատրիարք: Պեմ՝ ժողովածուն պահպանել է նաև Հսոց կաթողիկոսներ Ներսես Դ Օրորհալու և Գրիգոր Դ Տղայի կողմից գրված մեկական վավերագիր՝ առաքված Կոստանդնուպոլսի պատրիարք Միքայել Գ. Անքիպոսին (ՌՊՊ 16 և 25): Այս թղթերից երկրորդը վավերացված է Հռոմկլայի եկեղեցական ժողովին մասնակցած բարձրատիման կղերականների կողմից: Վերոհիշյալ երկու նամակներն էլ Կոստանդնուպոլսի պատրիարքի թղթերի պատասխաններն են: Այս նամակների թղթառաջների բանաձևն է Y «N: Բերված երկու թղթերի թղթառաջները և վերջաբան ողջույնները իրարից շատ են տարբերվում: Այս պարագան, հավանաբար, նկարագրող է բացատրել հրանով, որ խնդրո առարկա նամակներն միջանցից գաղտնիվում են բնույթով, քանի որ մեկը պատրիարքին ուղղված կաթողիկոսի պաշտոնական-անհատական նամակն է, մյուսը՝ եկեղեցական ժողովի կողմից գրված ու հաստատված պատասխանը: Մանավանդ ակնհայտ է Գրիգոր Դ-ի թղթառաջը-դիմումի բանաձևվումները, որոնք կարծես գրված են փայլ տպու համար չոր ու ցամաք թղթառաջին և հիշեցնում են բյուզանդական վավերագրերի քերթողական արվեստի նորմերով գրված մուտքերը (proimion): Ի հակադրություն այս թղթառաջների և վերջաբան-ողջույնների, պատրիարքականները համեմատաբար ավելի կայուն են և մշակված: Գրիգոր Դ-ի ժողովական թուղթն ունի նաև Հ.Գ. (= P.S.) և վերջում՝ ստորագրողների ցանկ: Պետք է ենթադրել, որ բնօրինակում հիշատակված հոգևոր գործիչները դնելով իրենց ստորագրությունները, գրել են սեփական թեմի անունն ու աստիճանը:

Դ) Պատրիարքական թուղթ առ կաթողիկոս: Բյուզանդական պատրիարքական միջեկեղեցական թղթի մանրը, կայսերականի նմանողությամբ և նրանից անկախ, մշակվել է Կոստանդնուպոլսի պատրիարքական նոտարատանը՝ հաղորդամյակների ընթացքում: Պեմ՝ ժողովածուում պահպանվել են այդ թղթերից երկուսը (ՌՊ 13 և 23), իսկ Թեոփիանոսի երկրորդ «Տրամախոսության» թնագրում՝ մեկը (ՌՊ 13): Այդ վավերագրերի թղթառաջների բանաձևն է Y «N: Բացի սրանցից համարենով պահպանվել է նաև Մանուել Ա Կոմնենոսի անունից գրված Միքայել Գ-ի թուղթը, որը չունի թղթառաջ և թղթավարտ: Հավանաբար դավանական թղթի համար պարտադիր չէին այդ բանաձևերը: Պատրիարքական թղթերի պաշտոնական բանաձևերը, ինչպես կայսերականներից, բավական կանոնավորված են:

ա) Կոստանդնուպոլսի պատրիարքն ըստ տիտղոսաշարի՝ իրեն համարում է Աստծո ողորմությամբ իր պաշտոնին նշանակված: Թղթառաջի կառուցվածքը նման է կայսերական թղթի համապատասխան հատվածի բանաձևին:

բ) Այս վավերագրերի թարգմանական տարբերակներում առկա շեղումները թույլ են տալիս ենթադրել, որ կաթողիկոսական նոտարատանը մշակվող բանաձևերը ժամանակ առ ժամանակ վերանայվում էին:

Մասն Բ «Վավերագրերի հայերեն և հունարեն ժողովածուները, բանակցությունների մասնակիցներն ու թարգմանիչները»: Գլուխ Առաջին. «Վավերագրերի հայերեն ժողովածուն և նրա կազմողը»: Հայոց եկեղեցու համար չափազանց կարևոր նշանակություն ունեցող վավերագրերի ժողովածուի ստեղծումը սովորական խնդիր չէր: Նրա հեղինակը պետք է ելք ու մուտք ունենար կաթողիկոսական դիվան, ուր պահվում էին բազմաթիվ վավերագրեր, որոնցից օգտվելը ոչ միայն լեզուների, այլ նաև մասնագիտական հստակ պատրաստություն էր պահանջում: Ներսես Լամբրոնացու ժողովածուի կազմման հիմնական նպատակը վավերագրերը հասու դարձնելն էր հաշ հասարակության բոլոր շերտերին: Ինչ քանի որ այդ երկը պետք է շրջանառության մեջ մտներ Հայոց եկեղեցու բոլոր թեմերում, կազմողը նպատակ էր հետապնդում ստեղծել զաղափարախոսական պայքարում օգտագործելի և ժամանակի պահանջները բավարարող մի դավանական ժողովածու: Տարտևի արքեպիսկոպոսը դիտավորություն ուներ միասնականացնել Հայոց եկեղեցու դիրքը Բյուզանդական (կամ օրթոդոքս) եկեղեցու և դավանանքի հարձակումներին դեմհանդիման: Պատահական չէ նաև այն փաստը, որ վավերագրերի այդ ժողովածուի կազմման հովանավորողը և հորդորողը սերում էր բյուզանդամետո նկրտումներ ունեցող իշխանական տրևից:

Ելնելով Պեմ-ում պահպանված վկայություններից, ժողովածուի կազմումը պետք է թվագրել 1182 թ. սեպտեմբերի 24 - 1183 թ. սեպտեմբեր

ժամանակահատվածով: Թվագրման սկիզբ ենք համարում 1182 թ. սեպտեմբերի 24-ը, որովհետև այդ թվականին է սկսվում Ալեքս Բ-ի միանձնյա թագավորության երրորդ տարին, իր հոր՝ Մանուել Ա Կոմնենոսի մահվանից հետո: Ինչպես ցույց ենք տվել աշխատության մեջ, Ներսես Լամբրոնացին կաշարության մայրաքաղաքում տեղի ունեցող ներքաղաքական պայքարի սկիզբը թվագրում է իր կողմից ՊիՄ ժողովածուն կազմելուց երեք տարի առաջ («յերից ամաց սկսեալ»): Այդ իսկ պատճառով, ժողովածուն հրապարակելու վերջին սահման ենք համարում 1183 թ. սեպտեմբերը, քանի որ Ներսես Լամբրոնացին դեռ չգիտե Ալեքս Բ Կոմնենոսի սպանության և Անդրոնիկոս Ա Կոմնենոսի միահեծան զահակալման լուրը:

Ներսես Լամբրոնացու համար Բյուզանդական կաշարությունը համաշխարհային քաղաքակրթության պահպանման հենասյունն ու սուղալեկն է: Խոսելով Մանուել Ա Կոմնենոս կայսեր մահից հետո Բյուզանդիայի սահմաններում տեղի ունեցած վերահիշյալ խռովությունների մասին, Տարսոնի արքեպիսկոպոսը գրանք մատուցում է որպես աշխարհի կործանման բացահայտ նշան. «թագաւորական արոտոյն՝ որ սին է աշխարհի, քստ ասելոյն Պաղոսի»: Նա Բյուզանդական կաշարության քաղաքական կյանքի վայրիվերումների հետ է կապում ողջ աշխարհի կացությունը. «Արդ ընդ սեանն տատանել՝ շարժի եւ աշխարհ ընդ ամենայն կողման սովով եւ սրածորեամբ եւ սասանութեամբ, որպէս սաաց Քրիստոս յաւառմապատում աւետարանութեանն չաղագս կատարածին»: Այդ միտումը բնորոշողի մեջ սերմանելով և զաղափարը իր կազմած ժողովածոյի վերջնական շեշտադրում դարձնելով, Տարսոնի արքեպիսկոպոսի գրչի տակ քիչ դեր չի խաղում քաղաքական իրադարձությունների հետ միաժամանակ մի շարք բնական երևույթների գուգահեռ նկարագրությունը: Այսպիսով, Ներսես Լամբրոնացու կազմած ՊիՄ ժողովածուն ներկայացնում է 1165 - 1178 թթ. հայ-բյուզանդական փոխհարաբերությունների ոչ միայն հիմնական վաճառագրերը, այլ նաև առաջարկում, մի շարք թղթերի գրման հանգամանքների պարզաբանմանը նվիրված հատմաններում և վերջաբանում փաստորեն պատմական աշխատություն է, որը նպատակ ունի հետագա սերունդներին հաղորդակից դարձնել ԺԲ դարի 60 - 70-ական թթ. Մերձավոր Արևելքի իրադարձություններին: Ինչպես վերևում պարզեցինք, Ներսես Լամբրոնացին այս երկն ավարտել է 1182 - 1183 թ.: Ժողովածոյի կազմույթ եկեղեցիների միության հայ-բյուզանդական բանակցությունների հնունդական կողմնակից է:

Գլուխ երկրորդ. «Վաճառագրերի հունարեն ժողովածուն». 1165 - 1178 թթ. հայ-բյուզանդական եկեղեցական բանակցությունների բնագրերը սկսված են նաև բյուզանդական մատենագրությամբ: Հունարենով պահպանված փաստաթղթերը մեզ են հասել Թեոփիանոսի Διόλεξις ποδὸς τὸν καθολικὸν τῶν Ἀρμενίων («Տրամախոսութիւն Հայոց կաթողիկոսի հետ»)

երկում, որ ներկայացվում են առաջին և երկրորդ այցելությունների բանակցությունների արձանագրությունները:

ԺԲ դարի հույն փիլիսոփա, «թագավորական ժառ» (քստ Մանուել Ա Կոմնենոսի թղթի բնորոշման. Μελον τῆς βασιλευσας μου), մագիստրոս Թեոփիանոսը բյուզանդական հայտնի մատենագիր է, դիվանագետ և աստվածաբան-գիտնական: Նրա ամուսնը հայ մատենագրության մեջ ճիշատակվում է սկսած 1182/3 թվականից, երբ Ներսես Լամբրոնացին կազմեց ՊիՄ ժողովածուն: Այստեղ Տարսոնի արքեպիսկոպոսը Թեոփիանոսին որակում է իրրև «այդ ոսն հարտարարան փիլիսոփայ արտաքին գրովք կրթեալ եւ եկեղեցական ուսմամբ ճոխացեալ»: Թեոփիանոսի անունը կապվում է Կիլիկյան Հայաստանի և Հոռմկլայի Հայոց կաթողիկոսարանի պատմությանը՝ նրա 1169 - 1170 և 1171 - 1172 թթ. ղեկավարած անցումներով: Այս երկու բանակցություններին հունական կողմից մասնակցում էր նաև Փիլիպոպոլսի շրջանի հայկական վանքերից մեկի վանահայր Հովհաննես Աթմանը:

Մեզ համար ուրույն հետաքրքրություն է ներկայացնում նաև այն սարագան, թե որտե՞ղ է վերջնական տեսքի բերվել Թեոփիանոսի առաջին բանակցությունների արձանագրության բնագիրը: «Տրամախոսութիւններում» առկա մի շարք վկայություններից կարելի է ենթադրել, թե այդ կատարվել է Կոստանդնուպոլսում՝ Թեոփիանոսի առաջին ղեկավարած անցումներից ամսմիջապես հետո: Այս ենթադրության համար անուղղակի փաստարկ կարող են ծառայել «Տրամախոսութեան» հետևյալ տեղեկությունները.

ա) Թեոփիանոսի առաջին «Տրամախոսութեան» բնագիրը համառոտված է Հոռմկլայում գրի առնված արձանագրությունների հիման վրա: Այս փաստն է հաստատում այն վկայությունը, քստ որի մեզ հասած բնագիր չեն մտել Քաղկեդոնի ժողովի դավանանքին վերաբերող մի շարք արտահայտությունների բացատրություններ, որոնց շուրջ կաթողիկոսի խնդրանքով խոսել է Թեոփիանոսը:

բ) Անդրադառնալով Ներսես Դ Օճորնալու հրամանով իրեն համար արտագրել տված Հովհաննես կաթողիկոսի երկին, Թեոփիանոսը գրում է. «...որը և բերեցինք մայրաքաղաք»:

գ) Թեոփիանոսի երկրորդ այցելության ժամանակ առաջին «Տրամախոսութեան» բնագիրը եղել է բանագնացի ձեռքին:

դ) «Տրամախոսութեան» բնագիրը վերանայված և համառոտված է Կոստանդնուպոլսում:

Այժմ անդադառնալով Թեոփիանոսի առաջին ղեկավարած անցումների ժամանակի խնդրին: Բյուզանդական աստվածաբանը Հոռմկլա է հասել իր հետ բերելով Մանուել կայսեր թուղթը՝ թվագրված երրորդ ինդիքտիոնի նոյեմբեր ամսով (τῷ μηνί Νοεμβρίῳ Ινδικτιωνος τοῦ τριτος): Այս ինդիքտիոնը համապատասխանում է 1169 թ. սեպտեմբերի 1 - 1170 թ. օգոստոսի 31 ժամանակահատվածին: Հետևապես՝ Մանուել Ա Կոմնենոս կայսեր թուղթը

գրվել է 1169 թ. նոյեմբեր ամսին: Ուրեմն՝ Թեոփիլանոսը կարող էր իր դեսպանախոսելով Կոստանդնուպոլսից դուրս գալ 1169թ. նոյեմբերին կամ դրանից հետո: Մինչև Հռոմկյա հասնելը, ենթադրելի է, որ դեսպանախոսմբք եղել է նաև Քեստնում:

Բյուզանդական դեսպանագնացը հետադարձ լեզվակոչություններ է հաղորդում նաև եկեղեցադադաքական այս փոխհարաբերություններում աթոռ-բարձրի բաժանման սկզբունքների վերաբերյալ: Ըստ հույն բանագնացի, կաթողիկոսի աջ կողմում նստում էին առիթի և հայ եպիսկոպոսները, իսկ բյուզանդական բանագնացները բազմում էին բոլորից հետո, կաթողիկոսի մասի կողմում, քանի որ ամենատառաչին տեղն էր ընծայվում իրենց:

Թեոփիլանոսի առաջին «Տրամախոսություն» բնագիրը ճիճակահանում նվիրված է Քրիստոսի բնության և Ներսես Գ Օնորհայու «Գիր հառատոյ խոստովանութեան» թղթում տեղ գտած ծիսադավանական ինկիլիքների քննարկմանը:

Ինչպես վերևում նշեցինք, իր առաջին «Տրամախոսություն» սկզբում Թեոփիլանոսը բերել է Մանուել Ա Կոմնենոսի 1169 թ. նոյեմբերին գրված թղթի բնագիրը: Թեոփիլանոսի առաջին դեսպանագնացության նկատմամբ ուղարկված Ներսես Գ Օնորհայու Մանուել Ա-ին ուղղված պաշտոնական նամակի բնագրի հունարեն թարգմանությունը հրատարակված է երկրորդ «Տրամախոսության» սկզբում: Մեզ չի հասել Հայոց կաթողիկոսի գաղտնի թուղթը, որի մասին խոսվում է Թեոփիլանոսի երկրորդ «Տրամախոսության» բնագրում:

Թեոփիլանոսի գլխավորած երկրորդ դեսպանախոսմբք Հռոմկյա է հասել աշխարհի արարչագործության բյուզանդական ՏՄՄ (= 6680) թվականին, Մանուել Ա Կոմնենոսի թագավորության 39-րդ, նրա որդի՝ Ալեքս Բ Կոմնենոսի ծննդյան երկրորդ տարվա երրորդ ամսին, հինգերորդ ինկիլքախոսի երկրորդ ամսվա 20-ին: Ամենայն հավանականությամբ երկրորդ դեսպանագնացությունը իր նպատակակետ Հռոմկյա քերթաքաղաքին է հասել 1171 թ. հոկտեմբերի 20-ին: Այս պնդության ժամանակ բյուզանդական աստվածաբանը Հռոմկյա է բերել չորս փաստաթուղթ: Դրանցից առաջինը Ներսես Օնորհայու մեզ չհասած գաղտնի թղթի պատասխան՝ Մանուել Ա Կոմնենոսի գաղտնի թուղթն է, որը թվագրված է չորրորդ ինկիլքախոսի միևնույն ամսով (Τῆς μηνὸς Ὀκτωβ. 8): Այժմ անհնար է ճշտել այս նամակի գրման ստույգ ամսաթիվը: Թեոփիլանոսի երկրորդ «Տրամախոսություն» մեջ պահպանվել է նաև Մանուել Ա Կոմնենոսի պաշտոնական նամակի ընդօրինակությունը: Չնայած, որ հունարեն բնագրի թղթառաջը և թղթաժարտը բացակայում են, այնուամենայնիվ դրանք կարող են լրացվել միայն Գիմն-ում պահպանված հայերեն թարգմանությամբ, որը կրում է նամակը Հռոմկյայի կաթողիկոսական նոտարատանը արձանագրելու թվականը. «Գրեցաւ յամենանն Գեկտեմբերի, յընդիքտինին ի հիւզն»: Նշանակում է, այս վավերագիրը

Հռոմկյայում թարգմանվել և այս կաթողիկոսական նոտարատուն է մտել 1171 թ. հեկտեմբեր ամսին: Թղթի հայերեն թարգմանությամբ պահպանված թղթառաջը գրեթե բառացիորեն կրկնում է կազմեր գաղտնի նամակի թղթառաջը՝ միայն մեկ էական շեղումով. հայերեն թարգմանության մեջ բացակայում է օգոստոս - ὈΥΓΟΥΣΤΟΣ պատվանունը, որը թարգմանելի կամ նոտարատան գրչի անփութության հետևանքով ընկել է բնագրին:

Թեոփիլանոսի առաջին «Διαλέξις»-ի բնագիրը վաղուց ի վեր գրավել է նաև հազազի գրիչների ուշագրությունը: Այս բնագիրը հայերեն է թարգմանել քարոզիչ Կղեմես Գալանոսը: Այս թարգմանությունը հայտնի է նաև հատկաժանան ձեռագրական ընդօրինակությամբ: ՄԻ-912 մատյանն ընդօրինակվել է Կոստանդնուպոլսում Ստեփանոս Գուկարյան գրչի կողմից, իսահակ Գեղամացի վարդապետի պատվերով: Ձեռագրին կցված է առաջաբան, որ հույն փիլիսոփան մեղադրվում է կեղծարարության մեջ: Առաջաբանի հեղինակն, ամենայն հավանականությամբ, իսահակ Գեղամացի վարդապետն է: Այդ է վկայում առաջաբանի հետևյալ հատվածը. «Եւ վասն այսպիսոյ ստութեան բանից նորին, այն էր թէպէտ վստելոյ, զի այրէր զանկեայն ի մեռս՝ բան թէ՛ ստամայի, այլ զի բազումը ունին զսա ի մերագմեաց հերձուածողաց, զոր իբրեւ զբան ճշմարիտ զստան զայն կարծելով՝ պաշարին ընդ մեզ նովաւ, որով և զպարզամիտսն մեր խաբին: Վասնորոյ հարկաւոր գիտացի զսա ունիցին, ընթերցեալ գիտացոյք զի՞նչ ժայրքեայն ի մեռնէ, և ըստ այնմ զբարինս Աստուածայնոց բանից պատրաստեալ՝ ըստ Դարի նակատս նմանեացն Գողիարոս, նախատողացն զժողովս մեր ուղղափառ և միաբնադատան»: Իսահակ Գեղամացին կազմել է տվել այս ձեռագիր ժողովածուն՝ ցույց տալու համար Ներսես Օնորհայու մասին Թեոփիլանոսի վկայությունների ստությունը. «Քանզի բանը և դատանութիւնը և թուղթը նորին որք յայնմ գրքոջ և յայլ զիրս իր, որ գնոյն ցուցանեն, զոր նա ստութեամբ գրէ, այլ մանաւանդ ներհակն նմին»:

Իսահակ Գեղամացու և ընդհանրապես ԺԿ դարի Հայոց եկեղեցու և հասարակական տարբեր հոսանքների շահագրգռությունների տեսանկյունից չափազանց կարևոր է նաև պատմիկաբանության հիշատակարանը, որտեղ հեղինակն ավելի է կոնկրետացնում, թե ինչու է իրեն պետք հենց այս գրությունը. «Գի բազումը ի մերագմեաց հերձուածողաց, որք կոչին ախթաքմայք, ստացեալ են զսա և շարամուտք եւմբ ծերեմ և թիւրեմ ըստ ախորժակաց իրեանց զբանս և զդատանդրինս երանելոյն Ներսիսի Կյայեցոյ»:

Փաստորեն ՄԻ-912 մատյանը Թեոփիլանոսի և Պիմ բնագրերի ուսումնասիրության առաջին փորձն է հայ բանասիրության մեջ:

Գլուխ երրորդ. «Քանակցությունների մատնակիցներն ու վավերագրերի թարգմանիչները» 1165-1178 թթ. հայ-բյուզանդական երկկողմ փոխհարաբերությունները բխում էին բյուզանդական կաշարության ներքին և արտաքին քաղաքականության էությունից ու շահերից. Կոստանդնուպոլսի հո-

գետր և քաղաքական գործիչները ոչ թե փորձում էին միասնություն ստեղծել քրիստոնեական եկեղեցիների և պետությունների գործողություններում, այլ հնարավորության սահմաններում նրանցից յուրաքանչյուրին առանձին-առանձին կլանել կամ օգտագործել կաշարության արտաքին և ներքին քաղաքական ծրագրերում: Հատկապես յուրաքանչյուր եկեղեցաքաղաքական կազմակերպության հետ կոստանդնուպոլսում մշակվում էր երկխոսության և հարցերի բարձրացման յուրօրինակ մեխանիզմ:

Իհարկե, Հայոց կաթողիկոսները գիտակցում էին նաև այդ ճանապարհը խոչընդոտող դժվարությունները և այն գիշումները, որ ստիպված կլինեին կատարել դավանության և եկեղեցական կազմակերպության կառավարման բնագավառում:

Հայոց եկեղեցու հետ վարվող երկկողմանի բանակցությունների արդյունքներից անհստակաժամ փորձում էր օգտվել նաև Բյուզանդական կողմը, որն իր շահերն ու հետևյալ քաղաքական նկրտումներն ուներ.

այս միության խնդրի հանգամանքով հետգնետե իրեն ենթարկել Բյուզանդական կաշարության տարածքի վրա գործող բոլոր հայկական եկեղեցական թեմերը,

բ) վերացնելով երկու քրիստոնեական եկեղեցիներն անջրպետող դավանական տարբերությունները, հայերի գիմնական ուժերը և տնտեսական հնարավորություններն անմնացորդ օգտագործել սեփական ներքին և արտաքին քաղաքական ծրագրերում,

գ) սպառազնիվ՝ կոստանդնուպոլսի օրթոդոքս եկեղեցու կառուցվածքի մեջ ամբողջովին ձուլել հայկական եկեղեցական սոց կազմակերպությունը,

դ) խաչակրաց իշխանությունների և մուսուլմանական տերությունների դեմ մղվող պատերազմներում ավելի լիարժեք օգտագործել հայկական զինական ուժերը,

ե) Հայոց եկեղեցու հետ դաշինքը հակադրել Մերձավոր Արևելքում գլոխ բարձրացրած Հռոմի պապական եկեղեցու նվաճողական քաղաքականությանը:

Բանակցությունների սկզբում Բյուզանդական կաշարության կողմից պարտադրվող պայմաններից շատերը երկխոսության ընթացքում և քաղաքական իրադրության փոփոխության հետևանքով դուրս եկան չբացահայտված ինքնակազմակերպության բանակցությունների նյութ լինելուց. օրթոդոքս-բյուզանդական եկեղեցու բռնած դիրքի փոփոխության մեջ հակադասական նշանակություն ունեցավ Միքիսիեֆալոնի ճակատամարտում Մանուել Ա, կոմնենոսի պարտությունը (1176 թ. սեպտեմբեր): Բյուզանդական կողմը, ելնելով ուժերի հետևյալ տեղաբաշխումից, հետգնետե հրամարվեց Հայոց եկեղեցուն մինչև այդ ներկայացրած գրեթե իր բոլոր հիմնական պահանջներից, չափազանց թույլ կերպով պարտադրելով ընդունել «երկու բնութիւն» դավանական բանաձևի ուղղափառությունը: Միաժամանակ, կախքը և պատրիարքը գնացին մի

շատ կարևոր և էական զիջման. 1176 թ. վերջին կոստանդնուպոլսի եկեղեցական ժողովում (որին մասնակցում էին օրթոդոքս եկեղեցու 20 բարձրաստիճանի հոգևորական) ընդունված և Հռոմիկա ուղարկված իրենց պաշտոնական թղթում հաստատեցին, որ Հայոց եկեղեցու դավանանքը եղել ու մնում է ուղղափառ, գրեյով. «ճանհաք զՁեր ուղղափառությունը»:

Հայոց եկեղեցու հոգևոր առաջնորդները, սակայն եկեղեցիների միության բանակցությունները պատկերացնում էին այլ կերպ, քան դրանք կազմակերպում և ծրագրում էր Բյուզանդական կաշարությունը: Ներսես Շնորհալին իր թղթերից մեկում նույնիսկ ակնարկում է, որ ինքը սեփական հախաձեռնությամբ բանակցություններ է սկսել հակոբիկ-ատորական եկեղեցու նորրևոսի պատրիարք Միքայել Ասորու հետ և ինչ-ինչ լրատումներից գիտե, որ Բյուզանդական եկեղեցին բանակցություններ է վարում Հռոմի պապական եկեղեցու հետ (№ 4): Այնուամենայնիվ, Հայոց եկեղեցուն չհաջողվեց երկու (բյուզանդական և հայոց) եկեղեցիների միութենական շարժումը վերածել միջազգային համամիութենական շարժման:

Մեջբնակությունների քննությունը ցույց է տալիս, որ Բյուզանդական կողմը հախընտրում էր հայերի, ատորիների և յատիմների հետ բանակցել առանձին-առանձին: Նկատի ունենալով վերոբերյալ փաստարկները, 1165-1178 թթ. հայ-բյուզանդական եկեղեցաքաղաքական բանակցությունները պետք է դիտել որպես երկկողմ փոխհարաբերություններ, որոնք տեղի են ունեցել Բյուզանդական օրթոդոքս եկեղեցու և կալսեր, մյուս կողմից՝ Հռոմիկայի Հայոց կաթողիկոսարանի, մասնավորապես հաղապետների, միջև:

Բանակցությունների մասնակիցները. ԺԲ դարի հայ-բյուզանդական եկեղեցական միության բանակցությունների ընթացքին տարբեր մակարդակներում մասնակցում էին և իրենց անմիջական միջամտությունն էին ցույց տալիս Բյուզանդիայի քաղաքական գործիչները, օրթոդոքս եկեղեցու պաշտոնյաները, Հռոմիկայի կաթողիկոսարանի և Հայոց եկեղեցու այլ թեմերի հոգևորականները, աշխարհիկ պաշտոնյաները, հակոբիկ-ատորական եկեղեցու ներկայացուցիչները:

Թարգմանիչները. Եկեղեցաքաղաքական բանակցությունները վարելու և վավերագրերը հունարեն կամ հայերեն թարգմանելու նպատակով երկխոսությանը մասնակցում էին նաև թարգմանիչներ: Օրինակ, Թեոփիլանոսի երկրորդ «Տրամախոսութեան» բնագրից հայտնի է, որ 1171/2 թթ. Հռոմիկայում տեղի ունեցած բանակցություններին բյուզանդական կողմից մասնակցել է թարգմանիչ Միքայել երեցու: Կամ՝ Ներսես Դ Շնորհալու հունարեն թարգմանված թղթերից մեկի (№ 8) վերնագրից հայտնի է դառնում, որ այդ վավերագրի թարգմանիչն է Հովնանես Արմանը, իսկ խմբագիրը՝ մազիաթոս Թեոփիլանոսը: Հայերեն թարգմանված վավերագրերը նմանատիպ ուղղակի վկայություններ չեն պահպանել, սակայն նկատի ունենալով, որ ԺԲ դարի երկրորդ կեսին Բյուզանդական եկեղեցու հետ միության կողմնակից և նիխ-

կիայում իր գործունեությունը ծավալած ամենաբեղմնավոր թարգմանչական-բից մեկը Ներսես Լամբրոնացին է, աշխատանքում բերված փաստերը ցույց են տալիս, որ նա Կոստանդին քահանայի հետ մասնակցել է վերոհիշյալ վավերագրերի թարգմանությանը: Այս թարգմանական համագործակցությունն ուներ ծրագրային բնույթ և ծառայում էր այդ ժամանակ Հայոց եկեղեցու առջև ծառացած եկեղեցաքաղաքական հիմնական խնդրին՝ Բյուզանդական և Հայկական եկեղեցիների փոխհարաբերությունների նորմալացմանը: Գրիգոր Գ Տղա կաթողիկոսի հրամանով և խնդրանքով, Կոստանդնուպոլսում գտնվող Ամտիոցի հունական պատրիարքի կողմից Հերապոլսի մետրոպոլիտ ձեռնադրված Կոստանդինը կաթողության մայրաքաղաքում և Հոռոմլյայում, անկասկած, իր լուծման է ներդրել երկու եկեղեցիների միջև սկսված բանակցությունների ընթացքում գրված վավերագրերի վերջնական ձևակերպման և թարգմանության գործում: Մեր կարծիքով նա է եղել նշված վավերագրերի նախնական հայերեն թարգմանությունների հեղինակը, որը հավանաբար թարգմանչի դեր է ստանձնել Գրիգոր Գ Տղայի վարած բանակցություններում և Հոռոմլյայի կաթողիկոսական նոտարատանը: Այդ մասին են անողջակիորեն վկայում Ներսես Լամբրոնացուց մեզ հասած թարգմանական հիշատակարանները:

Հայ-բյուզանդական եկեղեցաքաղաքական բանակցությունները Մանուել Ա Կոմնենոսի մահից հետո լծացման փուլ են մտնում և ընդհատվում են բազմակի և երկար ժամանակով: Բյուզանդական կաթողությունն այլևս հույս չունի նոր ռազմաքաղաքական կազմակերպելով վերականգնել սեփական պետության հեղինակությունը Կիլիկիայում և Հյուսիսային Ասորիքում: Միակայն այս ասպարեզում կայսրերը և հրանց ձեռնավորները փորձում էին շրջանցել Հայոց եկեղեցու հետ վարժող բանակցությունները, բռնի կերպով կամ համոզման ճանապարհով հումադափանություն տալով Հայոց կաթողիկոսարանին ենթակա Փիլիպոպոլսի (այժմ Պոլսի) և Փոքր Ասիայի որոշ բնակավայրերում: Ի տարբերություն այս ոտնձգությունների, Հայոց եկեղեցու համար հայ-բյուզանդական բանակցությունների հետագա շարունակումը դեռևս պահպանում էր կենսունակությունը: 1197 թ. Ներսես Լամբրոնացու այցը Կոստանդնուպոլիս և բանակցություններում քննարկված հարցերը սղ մասին են վկայում: Այդ բանակցություններն ընթանում էին Կ.Պոլսի Մ.Գեորգ եկեղեցում, իսկ ծխադավանական վեճերին մասնակցում էին Ալեքս Գ Անգելոս կայսրը (1195-1203), Գեորգ Բ Քսիֆիլինոս պատրիարքը (1191-1198), արքունիքի և եկեղեցու գործիչներ: Գրանով կաթողիկոսարանը ձգտում էր Կիլիկիայի և Հյուսիսային Ասորիքի ռազմատարր բնակչության առկայության պայմաններում դաշինք հաստատել Բյուզանդական կաթողության և օրթոդոքս եկեղեցու ու բնակչության հետ, նպաստել նշված տարածքներում Հայոց եկեղեցու դիրքերի ամրապնդմանը:

ԺԷ դարի ընթացքում, մասնավորապես 80-ական թվականներից օրթոդոքս-բյուզանդական հոգևորականությունը (որոնց մեջ կային նաև հայազգի գործիչներ) բացամայս պայքար է ծավալում հայկական եկեղեցու դեմ: Նրանց կողմից ոչ միայն հերձվածողական է համարվում «մի բնութիւն» Հայոց դավանաբանական բանաձևը, այլև, հիմք ընդունելով Մ. Մանակի «Տեսիլքը», պնդում էին, «նշ է առ Հայոց ազգիս եկեղեցի քահանայութեան շնորհ»: Ներսես Ալիկյանը այսպես է բացատրում Հոռոմլյան ճգնաժողի և նրա հետևորդների տեսակետը. «Մ. Մանակի Տեսիլքին համաձայն դադրած էր Հայոց քահանայապետութիւնը, ուստի նաև ձեռնադրութիւն տալու իրաւունքը»: Ուստի, եթե հոգևորականն է ընդունում բյուզանդական օրթոդոքսություն՝ պետք է կրկին ձեռնադրվի, եթե շարքային քրիստոնյան՝ հրաժանագիւմ էր «մեռնէր կնքել»: Ինչպես երևում է վերոբերյալից, Բյուզանդական եկեղեցին և նրա հետևորդներն այդ պայքարում չափաչանց կարևոր դեր են հասկացրել Մ. Մանակի «Տեսիլքին»: Բյուզանդական հոգևորականության գաղափարախոսական պայքարի այս լծակի խոտանման ակնկալությամբ է, որ Ներսես Լամբրոնացին և Կոստանդին Հերապոլսեցին դեռևս ԺԷ դարի 70-ական թթ. ձեռնամուխ են լինում Անդրեաս եւ Արեքաս Կեսարացիների «Յովհաննու Յայտնութեան մեկնութիւն» աշխատության թարգմանությանը:

Ելնելով վերոհիշյալ փաստերից, Կոստանդին Հերապոլսեցու և Ներսես Լամբրոնացու համատեղ թարգմանական աշխատանքների թվում կարելի է դասել նաև Պիլի՝ ժողովածու մտած կայսր Մանուել Ա Կոմնենոսի և Միքայել Գ Անքիալոս պատրիարքի նամակների հայերեն թարգմանությունների վերջնական բնագրերը, որոնց նախօրինակները պետք է պահպանվեն Հոռոմլյայի նոտարատան արխիվում:

Համագործակցելով ազգությամբ հույն, Հերապոլսի մետրոպոլիտ Կոստանդինի հետ, Ներսես Լամբրոնացին 1179-80թթ. հունարենից հայերեն է թարգմանել վերոհիշյալ աշխատությունները Հայոց կաթողիկոսի աջակցում մեկենասությամբ: Այդ համատեղ թարգմանությունների իրագործման աշխատանքանակի մասին Ներսես Լամբրոնացին գրում է. «Նա ի թարգմանել եւ ես ի գրել»: Անունամենայնիվ, Տարսուհի արքեպիսկոպոսի այս վկայությունը չպետք է տառաջիորդեն հասկանալ, քանի որ մեկ այլ հիշատակարանում իր կատարածի մասին նա գրում է. «...իմո՞վսան տկարութեամբ յեղիշեալ եւ ողղեալ թողի...»: Հետևապես պետք է ընդգծել, որ Ներսես Լամբրոնացին հետագայում մեկ անգամ ևս խմբագրել ու հաշտել է Կոստանդին Հերապոլսեցու հետ ժամանակին հայերեն թարգմանած երկերը:

Կաթողիկոսարանի և հայ հոգևորականության եկեղեցաքաղաքական շահերը պաշտպանող հիշյալ թարգմանությունները և պահպանված պատմական վկայությունները խոսում են այն մասին, որ Կիլիկիայի և Հյուսիսային

Ասորիքի հույն հոգևորականության շարքերում հայկական կաթողիկոսարանն ուներ իր դաշնակիցները, որոնց համար Հայոց եկեղեցու հետ Բյուզանդական եկեղեցու դաշինքն անհետաձգելի խնդիր էր: Կոստանդին Հերապոլսեցին այն հագեղոր գործիչներից է, որը փորձել է հպատակ հույն և հայ ժողովուրդների եկեղեցաքաղաքական և մշակութային մերձեցմանը:

Կոստանդին Հերապոլսեցու և ժ. Բ. դարի առաջին, հույն և լատին թարգմանիչների համատեղ գործունեությունը խոսում է այն մասին, որ հարևան ժողովուրդները ևս այդ դարաշրջանում գիտակցում էին Հայոց մշակույթի ինքնությունը: Կոստանդին Հերապոլսեցու մատենագրական ժառանգության ուսումնասիրությունը կարևոր է նրանով, որ հույն եկեղեցական գործիչը, հակադրելով Բյուզանդական եկեղեցու վարած եկեղեցական քաղաքականությունը, դաշնակցում է Հայոց կաթողիկոսարանի հետ: Կոստանդին Հերապոլսեցու և Ներսես Լամբրոնացու թարգմանական համագործակցությունը մի նոր, չափազանց կարևոր փուլ է Կիլիկիայի հայկական պետության ստեղծման համար մղվող գաղափարախոսական պայքարում:

Մասն Գ. «Հռոմիլայի ժողովը և բանակցությունների գերիմզկիք»: Գլուխ առաջին. «Հռոմիլայի եկեղեցական ժողովը և ՊիՄ ժողովածու չբնական նրա վարկերագրերը»: Ըստ ՊիՄ-ի կազմողի՝ ընդառաջ գնալով Հայոց կաթողիկոսարանին, բյուզանդական կողմն. «փոխան ինն զխոցն՝ զոր ի ժամանակս երանելոյն տեառն Ներսիսի խնդրեին, որ ծանր թուեր յաչս մեր, միայն զսա խնդրեցին գիտատույս բան՝ նիս միարանութեան, եւ քննեալ զսոյն զսին ողղափառ եւ համաձայն սրբոց հարցն»: Իրոք, Մանուել Ա Կոմնենոսի և Միքայել Գ. Անքիաւոսի 1176 թ. գրված նամակներում Բյուզանդական եկեղեցին այլ ևս չէր պահանջում անվերապահորեն հրաժարվել բանավեճի առարկա դարձած ծիսական անհամաձայնություններից և, ճանաչելով Հայոց դավանանքի ողղափառությունը, խնդրում էր, որ հավաքվելիք եկեղեցական ժողովը Հռոմիլայի սրբազան քահանայապետի հետ համատեղ կրկին հավատո խոստովանություն գրի և, ժողովին մասնակցող եպիսկոպոսների ձեռքով ստորագրելուց հետո, առաքի Կոստանդնուպոլիս: Մանուել Ա կայսրն առաջարկում էր կաթողիկոսին զխափոքել դեսպանագնացությունը: Բյուզանդական կայսեր պաշտոնական և պատրիարքի ժողովական նամակները Հռոմիլա են հասել 1177 թ. հունվար ամսին: Բյուզանդական կայսրությունից ստացված նամակները քննարկելով, կաթողիկոսը և իր մերձավորները. «գտնել զսին ողղափառ եւ համաձայն սրբոց հարցն», որից հետո թագավորական հրամանի և խնդրանքի համաձայն կաթողիկոսը. «հրաւեր ենան ժողովոյ ի Մեծն Հայք եւ Սարենլս եւ ի քաղաքն Երուսաղէմ եւ ի Սուրբ յեառն, որ Անա կոչի, ժողովել յամենայն կողմանց եպիսկոպոսացն ի Հայրապետականն աթոռ վասն այս խնդրոյ, որպէս տեսցեն զառաքեալ բանս խոստովանութեան եկեղեցոյն Հռոմոց»: Ժողովի

հրավիրման նախապատրաստական աշխատանքներն ամենայն հավանականությամբ սկսվել են 1177 թ. հունվար ամսից հետո, քանի որ կայսեր և պատրիարքի նամակները Հռոմիլայ կարող էին հասնել ամենաշուտն այդ ժամանակ:

Ժողովի հրավիրման տեղն ու ժամանակը. Ներսես Լամբրոնացու «Ատենաբանութեան» վերնագրի ուշ շրջանի խմբագրությունները հայագետներին տաքալարծությունների առիթ են տվել: Մասնագետների մի մասը կարծում է, թե հուշարձանը գրվել է Տալսոնի եկեղեցական ժողովում ընթերցվելու համար, մյուս մասը՝ Հռոմիլայում: Միասնական կարծիք չկա նաև ժողովի նրավիրման թվականի վերաբերյալ: Այդ մասին ամենահին պատմական վկայությունը պահպանել է ՊիՄ ժողովածուն. «Եւ ժողովեցան յամենայն գաւառաց եպիսկոպոսք ի սուրբ Պատարմ, ի Հայրապետականն աթոռն Հռոմիլայ՝ որ է առ ափն Եփրատայ...»: Այնպես է, որ ժողովը գումարվել է կաթողիկոսանիստ Հռոմիլա բերդաքաղաքում, սուրբ Պատարմ տոնակատարության օրերին: Հռոմիլայի ժողովի թվականը պարզելու ամենակարևոր աղբյուրներն այդ հավաքի կողմից Բյուզանդական պատրիարքին ուղղված ժողովական նամակի խորագրի հետևյալ հատվածն է. «...պատասխանի թղթոյն Միքայելի պատրիարքին» որ նախ քան զայս փոխեցաւ յաշխարհէ ի Քրիստոս»: Հայտնի է, որ Միքայել Գ. Անքիաւոս պատրիարքը մահացել է 1178 թ. մարտ ամսին: Ուրեմն՝ սկզբնաղբյուրում հիշատակված Պատարմ տոնակատարությունը համապատասխանում է 1178 թ. ապրիլի իննին: Ելնելով այս իրողությունից, Հռոմիլայի եկեղեցական ժողովը կարելի է թվագրել 1178 թ. ապրիլի 9-ից հետո ընկած մոտակա շաբաթվա ժամանակահատվածով, քանի որ քստ նույն սկզբնաղբյուրի. «Կատարեալ գիրքկազորն առորս շաբաթանաց Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ի միասին, եւ յետ այսորիկ պարսպեցին ի քննութիւն գրեցելոց թղթոցս ի թագաւորէն Հռոմոց եւ յեկեղեցոյն»:

Հռոմիլայի ժողովի մասին հանգամանորեն խոսող Մ.Օրմանյանը, թվագրելով այս իրադարձությունը 1179 թ. Չատիկով, գրում է. «Ժողովին տեղողութիւնն ալ ճշդուած չէ, քաջ երկարատեւ եղած պետք է ընդունիլ, վասն զի մինչեւ որ համաձայնութիւն սը գոյանայ եւ ժողովական գիրք պատրաստուին եւ թղթատարը ճանաչալ ելլայ Մանուէլի մահը տեղի ունեցաւ 1180 թ. Սեպտեմբեր 27ին, կամ 25ին, որ է քսել ժողովին քացուելէն 18 ամիս ետքը»: Մ.Օրմանյանի մեծն պնդումը արդարացի չէ: Վերևում տեսանք, որ ժողովը գումարված պետք է լինի 1178թ. ապրիլի 9-ին հաջորդող շաբաթվա ընթացքում: Նշանակում է, թե մինչև Մանուել Ա Կոմնենոսի մահը կար գրեթե երկուս ու կես տարի: Այդ իսկ պատճառով պետք է ենթադրել, որ կաթողիկոսը մեծ ջանքեր չի գործադրել փաստաթղթերը ժամանակին հասցեատիրոջը հասցնելու համար:

Ներսես Լամբրոնացին Հոռմկլայի ժողովում գրված թողթ-վավերագրերի ճակատագրի մասին գրում է. «Եւ աղաչեցին ամենայն ժողովն՝ փութապէս առարել զգրեալս, զի մի, ասեն, պատահեացէ յարքայէն մահուամբ խափանումն առաջարկեալ խորհրդոյս: Իսկ կարողիկոսն սուրբ պատրաստեաց վաղվաղակի թղթատարս՝ ընթանալ ի թագաւորականն քաղաք. եւ հասեալ նոցա ի Կեսարիա՝ արգելան վասն խռովութեան մանապարհի եւ դարձան յետոս, ընդ որ վշտացաւ ոչ սակաւս, եւ հնարէր վերստին զընթացսն: Յայնժամ եհաս համբար զառնագոյն, եւ յուսք զվախեան քարնպաշտ աստուածաւեր եւ իմաստուն արքային Հոռոմոց, յամենանն Սեպտեմբերի քսան եւ երեք, եւ ի թուականս Հայոց վեց հարիւր եւ քսան եւ ինն»:

Հոռմկլայի ժողովի հետ առնչություն ունեցող փաստաթղթեր. Ժողովից մեզ հասած վավերագրերը կարելի է բաժանել երկու խմբի՝ պաշտոնական և ոչ պաշտոնական: Պաշտոնական վավերագրերը երկուսն են. Գրիգոր Դ Տղա կարողիկոսի անունից պատասխաններ են գրվել Մանուել Ա Կոմենենոս Կայսրին և Միքայել Գ Անքիալոս պատրիարքին: Վավերագրերից երկրորդի տակ ստորագրել են 33 ժողովականներ (վավերագրագրերի նկարագրություն, № 24, 25):

Այժմ հարկ ենք համարում ուշադրություն հրավիրել Ներսես Լամբրոնացու մատենագրական մի քանի երկերի վրա, որոնք առնչություն ունեն բնակարկվող ժողովի հետ: Նկատի ունենք նրա զործունեության վաղ շրջանին պատկանող ստեղծագործությունների ժողովածուն, որը վերաբերում է հայ-բյուզանդական բանակցություններում արձարժված խնդիրներին:

Մեր կարծիքով, վատիկանի Բողոքան մատենադարանի № 84 եւ Երուսաղեմի Ա. Հակոբյանց վանքի մատենադարանի № 146 ձեռագրերը հարավատորեն են պահպանել նախօրինակի նյութերի պատվորությունը.

ա) «Առեմաբանություն»,

բ) «Գլխակարգություն հոռոմոց ... եւ լուծմունքն աղբյւր էր եղեալ»,

գ) «Խնդիրը Հայոց»,

դ) «Խորհրդածություն ... (և Պատարագի մեկնություն)»:

Հոռմկլայի եկեղեցական ժողովի մասնակիցները. Այս ժողովը 1165-1178 հայ-բյուզանդական եկեղեցաքաղաքական հարաբերությունների բարձրակետն է: Այնուհետք բնակարկված ծիսական և դավանական խնդիրների հանդեպ Հայոց եկեղեցու վերաբերմունքը պիտի անուղղակիորեն ազդեր հայ-բյուզանդական եկեղեցական և քաղաքական փոխհարաբերությունների հետագա ընթացքի վրա: Այդ իսկ պատճառով ժողովում հավաքվել էին Մեծ Հայքի և մերձակա հայաբնակ զավատների ու Մերձավոր Արևելքի հիմնական մուսուլմանական և քրիստոնեական պետությունների եպիսկոպոսները, ինչը խոսում փաստ է ժողովի կարևորության մասին:

Գլխի երկրորդ. «Անուխի պատրիարքական սրբոց հարցը ԺԲ դարի հայ-բյուզանդական բանակցություններում»: 1165-1178 թթ. փոխհարա-

բերությունները շուշափում էին երկու եկեղեցական կազմակերպությունների թե՛ ծիսական, թե՛ դավանական և թե՛ նվիրապետության մասին պատկերացումները: Բյուզանդական կայսրությունը սելջուկյան և Մերձավոր Արևելքի մուսուլմանական ու քրիստոնեական համայնքների և տերությունների հետ փոխհարաբերություններում մեծ նշանակություն էր տալիս այդ տարածքներում բնակվող հայ ազգաբնակչությանը, իսկ Բաղկաններում ազգամիջյան և միջեկեղեցական փոխհարաբերությունները կառուցելիս հաճախ էր ստիպված լինում հաշվի նստել Բաղկանների և Փոքր Ասիայի Հայոց եկեղեցու պաշտոնեության և հայ ազգաբնակչության հետ: Այդ իսկ պատճառով, Բյուզանդական կայսրության արտաքին քաղաքական ծրագրերում ԺԲ դարի 60-ական թվականներին քաղաքական հրապարակի վրա կրկին հայտնվեց օրոքողոթս-բյուզանդական և Հայոց առաքելական եկեղեցիների միջև միությունն աստատուելու հիմնավորը մոտիվը:

Իսկ այդ փոխհարաբերություններից ի՞նչ ակնկալիքներ ունեւ Հայոց եկեղեցին, ու ինչպե՞ս է այն արտացոլվել ժամանակաշրջանի սկզբնաղբյուրներում:

Ամենայն Հայոց հոգևոր հովիվը թեև կարողիկոսական արժույթի հաստատել էր Հոռմկլայում՝ բուն հայկական տարածքներից դուրս, սակայն ավանդույթի բերումով շարունակվում էր կոչվել և մնալ «Հայոց Մեծաց կարողիկոս» և հայրապետ, որին ենթարկվում էին լիովնչում և Արևմուտքում խարխիւ ձգած Հայոց ազգային եկեղեցու գրեթե բոլոր թեմերը և վանական կենտրոնները: Հայոց հոգևոր իշխանության եկեղեցաքաղաքական շահերը ևս բազմաթիվ հարցերում խառնվում էին Բյուզանդական հետ կրկնակայում, Հյուսիսային Ասորիքում և Փոքր Ասիայում ու Բաղկաններում: Հայոց եկեղեցին ևս փորձում էր հասնել իր համար առաջնակարգ նշանակություն ունեցող եկեղեցաքաղաքական հետևյալ խնդիրների լուծմանը.

ա) Բյուզանդական կայսրության տարածքում և նրա ազդեցության ոլորտում գտնվող երկրներում Հայոց եկեղեցու և նրա թեմերի համար ստեղծել գործունեության տանելի պայմաններ,

բ) Հայոց եկեղեցական կազմակերպությունը քույր եկեղեցու կարգավիճակով ընդունելի դարձնել Բյուզանդական եկեղեցուն և կայսրությանը, որպես ուղղափառ քրիստոնեական համայնք,

գ) Օգտագործել Բյուզանդական կայսրության հեղինակությունը և արտաքին քաղաքական հնարավորությունները Հայոց կաթողիկոսարանի դիրքերը միջազգային հարաբերություններում ամրապնդելու գործում, որն անուղղակիորեն նպաստելու էր ազգային պետականություն ստեղծելու գործընթացին:

1165-1178 թթ. հայ-բյուզանդական բանակցություններն անաբղյուճապարակեցին: Այնուամենայնիվ, հենց այդ բանակցությունների վերջնական փուլն հանգիսացող Հոռմկլայի ժողովում Ներսես Լամբրոնացին պատ-

րաստվել է ներկայացնել մի փափերագիր, ուր առաջարկվում էր դիմել Բյուզանդական կայսրությանը՝ փոխելու համար Հայոց եկեղեցու տեղը տիեզերական եկեղեցու նվիրատեական համակարգում: Դա մի ծրագրային փաստաթուղթ է, ուր Տարսուսի արքեպիսկոպոսը ժողովի անունից պատասխանում է Բյուզանդական եկեղեցու ինքն պահանջներին: Այստեղ՝ «Պիլասկարգութիւնը Հոռոմոց» աշխատության մեջ, Ներսես Լամբրոնացին պատասխանելով կայսր Մանուել Ա Կոմնենոսի և պատրիարք Միքայել Գ Անքիայոսի ողարկած ինքն պահանջներից վերջինին, ուր ասվում է, թե պետք է ընդունել «գառաջարկութիւն կաթողիկոսին միայն ի թագաւորէն Հոռոմոց», գրում է, որ այս գլուխը թեպետ և վերջում է դրվել, սակայն ընդգրկում է վերաբերյալ բոլոր խնդիրները: Եկատի ունենալով, որ Հայոց և Բյուզանդական եկեղեցիները սկսած է դարից բավական հեռացել են միմյանցից (չնայած երկուստեք բազմաթիվ փորձեր են կատարվել հաշտեցնելու Տիեզերական եկեղեցու աշխարհում երկու թեկերը), Ներսես Լամբրոնացին Հոռոմիայի ժողովի մասնակիցներին խորհուրդ է տալիս հետևյալ առաջարկով դիմել Բյուզանդական կայսրերը. «Է. Եւ կազմէ զարոոն Անտիոքայ կաթողիկոսն Հայոց. եւ զոր ինչ եկեղեցիք եւ սահմանք են ընդ իշխանութեամբ նորա յԱրևելս եւ յԱրևմուտս. եւ նոյն յաջորդեացէ հրամանաւ թագաւորիդ զՀայոց սնուն, այլ՝ մինչեւ ի սպաս»:

Ըստ քննարկվող փափերագրի, Բյուզանդական եկեղեցու և կայսրության հետ լավ փոխհարաբերություններ հաստատելու միայն մեկ ճանապարհ կա. «...անբան պնդութեամբ գտերն նուանել, աքիքն»՝ հարսնացուցանել զարոոն Անտիոքայ հայրապետութեան Հայոց, զի ի ձեռն ողջախոս կուսին այնորիկ եւ անրին փեսայիս այսորիկ միաւորութեան հաստատմը լինել ի մէջ երկուց ազգացս անբան սիրոյ խնամութիւն...զամենացն եկեղեցիս Հայաստանեայց ընդ իշխանութեամբ թագաւորիդ Հոռոմոց ամեալ կուցուցէ, եւ ի մեծ եկեղեցիդ խառնեցէ»: Ելնելով այս դրույթներից, Ներսես Լամբրոնացին նաև արձանագրում է. «Այսպէս յորժամ լիցի կաթողիկոսն Հայոց մի ի չորից արոտոց ընդ աշմէ թագաւորիդ Հոռոմոց, պատրիարք արոտոյն Անտիոքացոց, ամենայն Հայաստանեայցս յոյս եւ հաւատ եւ միաբանութիւն նովաւ առ ձեզ խարսխի. եւ ամենայն լուծ զոր դնէք ի վերայ պարսնոցի մեր՝ սառա յուսով թեթեւ ունելով՝ միշտ զմիջնորդն զառաջինն փոխել եւ թագաւորական քննութեամբդ կոչեցեալ: Ապա թէ ոչ, ծառայ գոյով այլ ազգաց ըստ մեղաց մեր եւ ընդ իշխանութեամբ նոցին բնակեալ, զիա՞րդ հնար է ձգտել առ թագաւոր Հոռոմոց եւ առաջարկութիւն կաթողիկոսի պահանջել»:

Հոռոմիայի Հայոց կաթողիկոսարանը Անտիոքի պատրիարքություն վերանվանելու այս ծրագրային դրույթը ԺԳ դարում ևս մի քանի անգամ վերաբարձրվեց Հայոց կաթողիկոսների կողմից, սակայն կիլիկիայի հայկական պետության կործանումից հետո ամբողջովին դուրս մղվեց շրջանառությունից:

Այսպիսով՝ մինչև Է՝ դարը հայ մատենագրությանը հայտնի չէ որևէ աշխատություն, որը համապարփակ պատկերացում տար Տիեզերական եկեղեցու նվիրատեական կառույցի մասին: Թ՛ դարից մեզ են հասել այդ նյութին վերաբերող առաջին աշխատությունները, որոնք նպատակ ունեն Բյուզանդական կայսրությանը ցույց տալ Հայոց եկեղեցու նվիրատեական կառույցի ամբողջականությունը: Այս համակարգը գրեթե անխաբար ավանդված է մինչև այսօր: ԺԶ դարում, կապված հայ-բյուզանդական եկեղեցական բանակցությունների ճոր փուլի հետ, Ներսես Լամբրոնացին և նրան համախոհ կիլիկիան հոգևորականությունը փորձ է կատարում փոխել Հայոց եկեղեցու տեղը Տիեզերական եկեղեցու կառուցվածքում: Նրանք առաջարկում էին Հայոց կաթողիկոսին տալ Անտիոքի պատրիարքի իրավասություն, իհարկե, նրա առաջադրման իրավունքը վերապահելով բյուզանդական կայսրին:

Պիլասկարգութիւնը. «Փիլիպուպոլսի հայկական բնակչությունը և հայ-բյուզանդական փոխհարաբերությունները ԺԶ դարի երկրորդ կեսին»: Բաղկանշան թերակղզու բյուզանդական զավառներում առաջին հայկական բնակավայրերը հայտնվում են սկսած Զ դարից: Մեծ և Փոքր Հայքներից զաղթող վերաբնակիչների խմբերին որպես կանոն զիսավորում էին տեղացի հայ ավատատերերը՝ ծառաների և զինված ջոկատի ուղեկցությամբ: Այդ խմբերի ղավանական պատկանելությունը ևս տարատես էր: Ժամանակ առ ժամանակ Բաղիանյան թերակղզի էին զաղթում ինչպես Հայոց առաքելական եկեղեցու ներկայացուցիչներ, այնպես էլ քաղկեդոնականներ և հերձվածողներ՝ սկսած Զ դարից հիմնականում պալիկիյաններ, որոնք հավատարմաբան հաղածվում էին հրշատակված երկու եկեղեցաքաղաքական կազմակերպությունների կողմից: Այդ բնակչությունը է՝ Ժ դարերի ընթացքում դարձավ բյուզանդական ռազմական ուժերի հիմնական հեծարաններից մեկը Բաղիանյան տարածաշրջանում, ուր հարկ էր առաջացել պաշտպանվել Կայսրության հյուսիսային սահմանները քաղվոր ցեղերի ամաչացնող հարձակումներից, որոնք ժամանակ առ ժամանակ ներխուժում էին Դանուբ գետի հյուսիսային ափից, ավարտելով Բաղիանյան թերակղզու բնակավայրերը: Այդ տարածաշրջանում հաստատված հայ ազգաբնակչությունը դարերի ընթացքում հարմարվել էր նոր բնակության վայրում ապրող ժողովուրդների սովորույթներին, իսկ մի շարք վայրերում, ժամանակի ընթացքում, ենթարկվել էր ուժացման: Չնայած դրան, ժամանակ առ ժամանակ կայսրությունը դավանական հաղածանքներ էր սկսում պալիկիյան և միաբնակ համայնքների դեմ, թեև վտանգի պահին նրանց Բյուզանդիան հաճախ օգտագործում էր Կայսրության հյուսիսային սահմանների պաշտպանության գործում: Այդ երկու հակամետ համայնքների նկատմամբ վարվող բյուզանդական քաղաքականության շարժառիթներն ու պատմությունը կարող են առավել մանրագնքին ուսումնասիրության: Բաղիանյան թերակղզում, մասնավորապես նրա մար-

դաշտու քաղաքներից մեկը հանդիսացող Փիլիպուպոլսում հայկական բնակավայրերի ղեկի ու նշանակության բացահայտման գործում անփոխարինելի են ժ.Ք դարի (Կոմենենոսների կառավարման դարաշրջանի) բյուզանդական սկզբնաղբյուրները, որոնք ավելի համապարփակ են ներկայացնում հայկական գաղութի գործունեությունը: Այդ երկերն ավելի հաճախ անդրադառնում են հայ միաբնակներին և ներեռնակությանը, գրեթե իրարից չտարբերակելով այդ երկու հակամետ դավանական խմբերը: Նման վերաբերմունքը շարունակվեց մինչև ժ.Ք դարի 60-ական թվականները, երբ Կալսրոնյան երկար ընդմիջումից հետո կրկին բանակցություններ սկսեց Հռոմիկացի կաթողիկոսարանի հետ՝ Հայոց և Բյուզանդական եկեղեցիների միության շուրջ: Հռոմիկացի կաթողիկոսարանի հետ առաջ բաշխվով եկեղեցիների միության ծրագիրը, Կալսրոնյանը փորձում էր իր կողմը գրավել Բալկանյան թերակղզու, Փոքր Ասիայի, Կիլիկիայի և Հյուսիսային Անտիոքի հայ բնակչությանը: Հայոց եկեղեցու հալածանքների նետանքով հիշյալ տարածքներում անհուշաբան քաղաքներ թողացել էին Բյուզանդական կայսրության դիրքերը և գրեթե անհնար էր դարձել հայկական գինական ուժի օգտագործումը Կալսրոնյան սահմաններում: Այնուամենայնիվ, ներկա դիպքում մեզ հետաքրքրում է Հովհաննես Աթմանի ազգության և դավանական պատկանելության հարցը: Այս խնդրին անդրադարձել են մի շարք հետազոտողներ: Նրանց մի մասը Հովհաննես Աթմանին համարում է և՛ ազգությամբ, և՛ դավանանքով հայ, համարելով, որ նա Հայոց առաքելական («միաբնակ») եկեղեցու ներկայացուցիչն է, իսկ մյուս մասը նրան համարում է քաղկեդոնական («երկաթեակ»): Պաշտպանելով տեսակետներից առաջինը, կարծում ենք, որ փաստարկներն անբավարար են ապացուցելու համար այն տեսակետը, ըստ որի Հովհաննես Աթմանը Փիլիպուպոլսի շրջանի հայկական քաղկեդոնական վանքի վանահայր է եղել: Մեր փաստարկն այն է, որ բյուզանդացի չ. Բարթիկյանի միատուն «համակրոն» և ծրագրի մեծ մասերի տարբերության կողքին նույն Թեոդորանոսի բնագրում Աթմանի բերանով ասված խոսքը հակասում է այն եկրագրությանը. քանի որ Աթմանը իրեն հայտարարում է ոչ միայն Ներսես Օնորհալու ազգակիցը, այլ նաև հավատակիցը (ὁμοπιστος):

Մեզ հասած սկզբնաղբյուրները դեռևս չեն հաստատում նաև այն վարկածը, ըստ որի Հովհաննես Աթմանը հետագայում դարձել է Փիլիպուպոլսի քաղաքի և գաղափի հայկական միաբնակ եկեղեցու եպիսկոպոս: Այդ վարկածը 1967 թ. առաջ է բաշխել գերմանացի բյուզանդագետ Վիլհելմ Լեխտը, որին էլ հետևելով, այդ տեսակետը մասնավորեցրել է Լ. Ջեքիլանը: Պահպանված սկզբնաղբյուրները մեզ թույլ չեն տալիս նշգրիտ տեղադրել այն վանքը, ուր վանահայր է եղել Հովհաննես Աթմանը, սակայն նրա մասնակցությունը հայ-բյուզանդական բանակցություններին, կարծում ենք, ապացույցն է այն միտումի, որով ժ.Ք դարի երկրորդ կեսին Բյուզանդական

կայսրությունը սկսում է հաշվի նստել Փիլիպուպոլսի և նրա շրջակայքի միաբնակ հայ բնակչության հետ: Թեոդորանոս մագիստրոսի ղեկի Հռոմիկյան կառավարման երկրորդ դասականագնացությունից գրեթե մեկ և կես տասնամյակ անց հայկական, հունական և լատինական սկզբնաղբյուրները կրկին սկսում են հիշատակել Փիլիպուպոլսի գաղութը: Հայկական այս բնակավայրի հիշատակման առիթը կաթողիկոսարանի փոխարարերություններն էին Հռոմի պապության հետ և դրանց հաջորդած երրորդ խաչակրաց ռազմարշավը, որի ընթացքում ուրույն տեղ էր վերադասված Փիլիպուպոլսին և նրա շրջակայքի հայ բնակչությանը: 1184/5 թ. Հռոմիկացի կաթողիկոսի համեմատականով Հռոմ է այցելում Փիլիպուպոլսի քաղաքի հայկական եկեղեցու եպիսկոպոս Գրիգորը և բանակցություններ վարում Հռոմի կաթողիկե եկեղեցու ստաշնորդի հետ: Պահպանվել է Լուսինոս Գ-ի (1181 սեպտ. - 1185 սեպտ.) նամակը ողղված Հայոց կաթողիկոս Գրիգոր Գ Տղային: Ինչպիսիք կարելի է բացատրել Հայաստանից այդքան հեռու՝ Բալկաններում գտնվող եպիսկոպոսական սրբոթի թեմակալի այցելությունը կաթողիկե եկեղեցու գլխավոր նստավայր՝ որպես Հռոմիկացի Հայոց կաթողիկոսի կողմից առաքված դեսպանագնաց:

Մահանել Ա Կոմենենոսի և նրա միակ ժառանգ Ալեքս Բ-ի մահից հետո (1183 թ.) Բյուզանդական կայսրության ներսում տարեցուտարի խառնում է քաղաքական ճգնաժամը: Այդ պայմաններում կրկին վերսկսվում են «հերձվածող» հաշտի միատունը հալածանքները Կալսրոնյան ներսում: Վիլհելմ Լեխտը այդ հալածանքների սկսման թվական է համարում Անդրոնիկոս Կոմենենոսի (1183-1185) իշխանության տարիները: Բյուզանդագետն իր տեսակետներն ամրապնդում է Նիկեոսա Խոնիատեսի Պատմության մեջ հիշատակվող Անդրոնիկոս Կոմենենոսի և պատրիարք Թեոդորանոս Ա Բուրադիոսի (1179-1183) հակամարտության շարգրանքով, ուր կայսրը դիմելով պատրիարքին, նրան անվանում է «բռնց 'Αρμένιος» (թարգման հայ): Ըստ Նիկեոսա Խոնիատեսի վկայության, կայսրն ակնարկել է այն հանգամանքը, որ պատրիարքը հայրական կողմից հայկական ծագում է ունեցել: Երրորդ խաչակրաց ռազմարշավի նախորդին Հռոմի կաթողիկե եկեղեցու հետ Հայոց կաթողիկոսարանի բանակցությունները ժ.Ք դարի պատմիչ Վարդան Արևելցին հասում է Բյուզանդական կայսրության ողջ տարածքում հայ միաբնակների դեմ սկսված հալածանքների հետ:

Գրիգորի Փիլիպուպոլսի եպիսկոպոս լինելու փաստը հաստատված է միայն Լուսինոս Գ-ի (1181-1185) թղթում: Ուրեմն՝ նա Հռոմում կարող էր լինել մինչև 1185 թ. սեպտեմբերը, այսինքն՝ Անդրոնիկոս Կոմենենոսի իշխանության տարիներին:

Ինչպես տեսանք, բյուզանդական, հայկական և լատինական պատմական սկզբնաղբյուրները միաբերան վկայում են, որ Փիլիպուպոլսում և նրա շրջակայքում ժ.Ք դարի 60-80-ական թթ. գոյություն ունեին մի հզոր

հայկական գաղութ, որը ենթարկվում էր Հոռմկլայի Հայոց կաթողիկոսաթանին և ուներ եպիսկոպոսական աթոռ, որը բաժնական լուրջ դեր էր կատարում Բալկանյան թերակղզու քաղաքական կյանքում: Այդ էր պատճառը, որ Բյուզանդական կայսրը նրա հոգևոր առաջնորդներին ներքաշում էր երկու եկեղեցիների միջև սկսված եկեղեցական բանակցությունների ոլորտը:

Ամփոփենք՝ ԺԲ դարի 60-70 - ական թվականների հայ-բյուզանդական եկեղեցական բանակցությունների վավերագրերի պարունակած նյութը և քաղաքական փոխհարաբերությունների ընթացքը թույլ են տվել ներկա աշխատանքում քննարկել և հետազոտողների ուշադրության առարկան դարձնել հետևյալ հարցերը.

ա) Մենագրության առաջին մասում տրված վավերագրերի նկարագրությամբ փորձել ենք մշակել հայկական միջնադարյան փաստաթղթերը նկարագրելու և պատմական այդ սկզբնաղբյուրները ուսումնասիրելու հիմնական մոտեցումները: Ցարեր ժողովածուներում և ձեռագրերում պահպանված վավերագրերի կողքին, սկզբնաղբյուրների ընձեռած նյութի աահմաններում, վերականգնել ենք հիշյալ ժամանակաշրջանի հայ-բյուզանդական եկեղեցական բանակցությունների մեզ չհասած վավերագրերի մոտավոր բովանդակությունը: Վավերագրագիտական նյութի համակողմանի ուսումնասիրության ընթացքում պատմական կապեր ենք բացահայտել այն և հետագա դարաշրջաններում Հայոց եկեղեցու կողմից շրջանառության մեջ դրված մի շարք վավերագրերի միջև: Երկկողմ փոխհարաբերությունների այս կարճատև ժամանակամիջոցի հետազոտությամբ, քննարկման նյութ ենք դարձրել հայ-բյուզանդական բանակցություններում բանավեճի առարկա՝ հիմնական եկեղեցաքաղաքական հարցերը:

բ) Հայերենով և հունարենով պահպանված փաստաթղթերը չլիներով ինքնագրերը, այնուամենայնիվ, թույլ են տալիս պատկերացում կազմել այդ ժամանակաշրջանի կուստանդուպոլսի և Հոռմկլայի նուստական գրասենյակներում վավերագրերի կազմման, փաստաթղթերի ձևավորման հիմնական սկզբունքների վերաբերյալ: Ռատումնասիրության ընթացքում վեր ենք հանել կուստանդուպոլսի կայսերական ու պատրիարքական, Հոռմկլայի կաթողիկոսական դիվանատներում աշխատանքի կազմակերպման կարևոր մոտեցումներ: Բյուզանդական վավերագրատության լայն ֆոնի վրա վերլուծել ենք պահպանված փաստաթղթերի կառուցվածքը, վերնագրերը, թղթաուղղվածքը և թղթավարտները, որոնք թույլ են տալիս ճշգրիտ պատկերացում կազմել միջազգային փոխհարաբերություններում Հայոց կաթողիկոսների գրադեցում դիրքի վերաբերյալ:

բ) Նկարագրված և հետազոտության ենթարկված վավերագրերի հիման վրա եկել ենք այն եզրակացության, որ Ներսես Լամբրոնացու և Թեոփիլանոս մագիստրոսի կազմած փաստաթղթերի ժողովածուները 1165 - 1178 թթ. հայ-բյուզանդական բանակցությունների անփոխարինելի սկզբնաղբյուր-

ներ են և հետագայում էլ մեծ կարևորություն են ունեցել ճշտելու համար երկու եկեղեցիների դիրքը սգս կամ այն հոգևոր կամ քաղաքական խնդրի վերաբերյալ: Աշխատության մեջ ճշտում ենք նաև առաջին պատմական անհատների դիրքը քննվող եկեղեցաքաղաքական իրադարձությունների նրկատմամբ:

գ) Առաջին անգամ ԺԲ դարի հայ-բյուզանդական բանակցությունների ընթացում է, որ Հայոց եկեղեցու քաղաքատիճան հոգևորականները, Ներսես Լամբրոնացու գլխավորությամբ, ի հակակշիռ բյուզանդական ինդկետների, առաջ են քաշում և Հայոց եկեղեցու քաղաքատիճան հոգևորականության շրջաններում քննարկման նյութ են դարձնում Հոռմկլայի կաթողիկոսարանը Անտիոքի պատրիարքական աթոռի իրավասություններով օժտելու հարցը, որն էլ համարում ենք այս բանակցություններում մագիսկական կողմի գերխնդիրը: Խաչակրաց առաջին երկու արշավանքներից հետո, կորցրնելով Անտիոք քաղաքը, հույները զրկվել էին այնտեղ պատրիարք ձեռնադրելու հնարավորությունից, քանի որ Հոռմի եկեղեցին սկսել էր այդ զահին նշանակել կաթողիկ հոգևորականներ: 1165 թ. Մասնուել Յ. Կոմեննուսին հաջողվեց ժամանակավորապես Անտիոքում կրկին հույն պատրիարք նստեցնել, սակայն վերջինիս գործունեությունը Անտիոքում կարճ տևեց, իսկ հագեվոր այդ գործիչը՝ Կյուրեղ պատրիարքը, ստիպված հանգրվանեց Կուստանդուպոլսում: Վեպերի գաղափարման նման պայմաններում աչքի է գալնում այն հանգամանքը, որ Հայոց կաթողիկոսը 1175 թ. իր երաշխավորյալ Կուստանդուպոլսի Հեռապոլսի արքեպիսկոպոս ձեռնադրելու համար խոնդրում էր ոչ թե Անտիոքի լատին պատրիարքին, այլ իր նստավայրից հետագած և Կուստանդուպոլսում հանգրվանած՝ Անտիոքի հույն պատրիարքին:

դ) Քննարկման նյութ դարձած խնդիրների մեջ առանձնանում է ԺԲ դարում Փիլիպուպոլսի հայկական գաղութի զբաղեցրած առանձնահատուկ դիրքը Բալկաններում: 1185 թ. այնտեղ հիշատակվող եպիսկոպոսական աթոռը կապող օղակ էր դարձել Հոռմկլայի Հայոց կաթողիկոսարանի, Բյուզանդական կայսրության և Հոռմի պապական եկեղեցու միջև ծավալված փոխհարաբերություններում: Փիլիպուպոլսին նկիրված հատվածում փորձել ենք վեր հանել քաղաքի հույն և հայ բնակչության մոտեցումները ժամանակի որոշ պատմական իրադարձությունների նկատմամբ, պարզաբանել բյուզանդական մատենագրության մեջ արժանատիորված հակահայկական քաղաքականության միտումները և լուսաբանել կաղսրության պաշտոնական քաղաքականության մոտեցումը, որին փորձում էին հակադրվել Հայոց եկեղեցին և գաղութի բնակչությունը:

Առանձնացնող բեմադրվելու հնարավորությունները.

- 1) Բյուզանդիայի արևելյան քաղաքականությունը և Կիլիկյան Հայաստանը ժԲ դարի 30-70-ական թվականներին, Երևան 1988 (18 մամուլ):
- 2) Գրիգոր Գ Փոքր Վկայասերին վերագրված մի թղթի մասին, «Լրաբեր» հասարակական գիտությունների, 1978, № 3, էջ 92 - 98:
- 3) Հայ-բյուզանդական դիվանագիտական հարաբերությունները XII դարի 60-70-ական թվականներին.- ԴԲՀ, 1981, № 2, էջ 150-163:
- 4) Կիլիկիայի բյուզանդական կառավարիչները և Թուրքիայի իշխանությունը ժԲ դարի 40-70-ական թվականներին, ԴԲՀ, 1984, հ. 3, էջ 74-86:
- 5) Новый памятник Армяно-византийских церковно-политических и дипломатических сношений второй половины XII века, Кавказ и Византия, вып. 4, Ереван 1984, с. 224-231.
- 6) Восточная политика Византии и Киликия в годы правления Иоанна II Комнина (до 1136г.), Кавказ и Византия, Вып. 5, Ереван 1987, с. 5 - 13.
- 7) Ներսես Լամբրոնացիի և XII դարի հայ-բյուզանդական հարաբերությունների վավերագրերի ժողովածուն, ԴԲՀ, 1989, № 4, էջ 109 - 116:
- 8) Հայ-բյուզանդական եկեղեցաքաղաքական բանակցությունների մասնակիցներն ու վավերագրերի բարգմանիչները (XII դարի 60-70-ական թվականներ), ԴԲՀ, 1990, № 4, էջ 82 - 93:
- 9) Bibliographie zur Rezeption des byzantinischen Rechts im alten Rußland sowie zur Geschichte des armenischen und georgischen Rechts / Unter Mitwirkung von Azat Bozozjan, Igor' Cicurov, Sulchan Goginava, Kirill Maksimovic und Jaroslav Scapov, zusammengestellt von Ludwig Burgmann und Hubert Kaufhold, Frankfurt am Main, 1992, S. 91 - 187.
- 10) «Բյուզանդական կայսրություն», տե՛ս Հայաստանի հարակից երկրների պատմություն, ձեռնարկ միջնակարգ դպրոցի 7-րդ դասարանի համար, Երևան 1992, 40-52:
- 11) «Կիլիկյան Հայաստանը XI դ. վերջին - XIV դ.», տե՛ս Հայոց պատմություն. Հնագույն ժամանակներից մինչև XIV դ. վերջը, Ռուսմանյան ձեռնարկ հանրակրթական դպրոցի 5-6-րդ դասարանների համար, Երևան 1993, էջ 180-198, 210-214:
- 12) Les documents juridiques du royaume Arménien de Cilicie, in: Actes du Colloque "Les Lusignans et l'Outre mer", Poitiers-Lusignan 20-24 octobre 1993, Poitiers [1994], p. 54-58:
- 13) «Գրիգոր Տոտեռոցի վարդապետի վերաբերյալ պատմական մի շարք վկայությունների քննություն», տե՛ս «Շողակաթ» հայագիտական հանդես, 1995 թ., Առանձնով 1995 (0,7 մամուլ):

Տպագրության համեմատ աշխատանքներ.

- 14) «Պատմառ խնդրոյ միարանութեան», պրակ Ա, Հայ-բյուզանդական եկեղեցական բանակցությունների վավերագրերը (1165-1178) (13 մամուլ):
- 15) «Պատմառ խնդրոյ միարանութեան», պրակ Բ, «Պատմառ խնդրոյ միարանութեան քաղաքորին Հոռոմնց մանուէրի եւ սրբոց կաթողիկոսացն Հայոց Ներսիսի եւ Գրիգորիսի թուղթն, զոր գրեցին առ միմեանս, կազմեալ ի Ներսիսէ Լամբրոնացոյ» / տալիսարան, գիտահամեմատական բնագիր, ծանոթագրություններ (15 մամուլ):

Документы армяно-византийских церковных переговоров (1165-1178) (Резюме)

Армяно-византийские церковно-политические отношения прослеживаются на протяжении всей истории восточно-римской империи. Сохранилось множество документов, относящихся к этой сфере, не ставших, однако, доселе предметом специального историко-исследовательского исследования, не изучавшихся как конкретные исторические или дипломатические документы.


В XII веке в ряду отдельных взаимоотношений между разными христианскими церквями, можно выделить армяно-византийские переговоры 1165-1178 гг. Византийский двор и церковная организация вели отдельные переговоры с Римской курией и патриархами сирийской яковитской церкви. Однако, при этом Константинопольский патриарх и император приложили усилия к тому, чтобы они не слились в единый процесс. Позиция империи в церковных переговорах вытекала из сущности византийской Восточной политики. Поэтому с каждой церковно-политической организацией разрабатывались собственные механизмы сношений.

Исследуемые нами документы, сохранились на двух языках - греческом и армянском. Некоторые из них дошли до нас в интерпретации патриарха сирийской яковитской церкви Михаила Сирийца. Армянские и греческие тексты, в виде специальных компеდიумов на тему, составлены церковными деятелями XII в. - византийским теологом магистром Феорианом и епископом армянской церкви города Тарса Нерсесом Ламбронати, являвшимся участниками переговоров. В сборнике Феориана говорится о двух этапах армяно-византийских переговоров, приводятся записи происшед-

ших бесед и копии некоторых документов. Несколько иной характер носит сборник документов Нерсэса Ламбронаци, где собраны документы армяно-византийских переговоров 1165-1178 годов, с комментариями, введением и заключением составителя. Магистр Феориан и Нерсэс Ламбронаци приводят документы из архивов Константинополя и Ромкалы, вследствие чего в формулировках исследуемых свидетельств очевидны черты, характерные для делопроизводства названных архивов. Результаты настоящей работы позволяют составить более полное представление о сохранившемся материале, выявляют своеобразия работ нотариальной канцелярии армянского католикосата Ромкалы, императорской и патриаршей канцелярии Константинополя.

Взаимоотношения Византийской империи и константинопольской церкви с армянским католикосатом затрагивали внешние и внутренние интересы обеих сторон. Во взаимоотношениях с сельджуками, с другими мусульманскими государствами и Иерусалимским королевством, Византийская империя строила свои внешне- и внутривосточные планы, учитывая потенциальные силы армянского населения названных регионов. Для урегулирования межнациональных и межцерковных взаимоотношений на Балканах Византийская империя также должна была принимать во внимание интересы армянского населения Филиппополя и его окрестностей. Необходимость этого была в полной мере оправдана во время третьего крестового похода, когда армянское население города и близлежащих областей перешло на сторону Фридриха Барбароссы. По этому поводу во внешне- и внутривосточных программах Византийской империи в 60-х годах XII века появилась программа установления унии между византийской православной и армянским апостольским церквами.

Диссертация представлена на соискание ученой степени доктора исторических наук



Իշխանիկ Է արտատպւմ 6.09.1995 թ.
Թուղթ 60x84 2.0 մանուկ

Գլխավոր 121

Տպարանակ 100

Հրատարակված է Երևանի պետական համալսարանի
« Ինտելեկտ » ճեխում
Երևան, Մոսկվայի 1